


# Ի. ՍՏԱԼԻՆ

---

ԶՐՈՒՅՑ ԱՄԵՐԻԿԱՆ  
ԱՌԱՋԻՆ ԲԱՆԿՈՐԾԿԱՆ  
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ



ՀԱՅԿՈՒՄՀԱՏՈՒՄ • 1937 • ՅԱՐԵՎԱՆ



*ct*  
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ



Հ. ԱՍՈԼԻՆ

9(4)2  
4

Տ 1961 թ ՀԱՅԹԱՒՍ

ԶՐՈՒՅՑ ԱՄԵՐԻԿԱՆ  
ԽՈՏՁԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ  
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

1927 սեպ բերի 9-ին

1452



A II  
68(2)

И. СТАЛИН  
БЕСЕДА С ПЕРВОЙ  
АМЕРИКАНСКОЙ РАБОЧЕЙ  
ДЕЛЕГАЦИЕЙ

Армпартиздат, Ереван, 1937

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ  
ՅԵՎ ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1-ին ՀԱՐՑ: Լենինը և կոմիտասակցությունը գործնականապես ի՞նչ ենր սկզբանեներ են ավելացրել մարքսիզմին: Ճի՞շ կլիներ արդյոք ասել, թե Լենինը հավատում եր «ստեղծագործական հեղափախությանը», մինչդեռ Մարքսն ավելի հաջամիշ եր սպասելու տեսական ուժերի գագարնակետային զարգացմանը:

ՊԱՏՎԱԾԽԱՆ. Յես կարծում եմ, վոր Լենինը վոչ մի «նոր ակլրունք» չի «ավելացրել» մարքսիզմին, ինչպես վոր Լենինը չէ վերացրել մարքսիզմի «հին» սկզբունքներից վոչ մեկը: Լենինը յեղել ե և մնում ե Մարքսի ու Ենգելսի ամենահավատարիմ ու հետեղական աշակերտը, վորն ամրողապես ու լիովին հենվում ե մարքսիզմի սկզբունքների վրա: Բայց Լենինը Մարքսի—Ենգելսի ուսմունքի միմիայն կատարողը չեր: Նա դրա հետ մեկտեղ՝ Մարքսի ու Ենգելսի ուսմունքի շարունակողն եր: Ի՞նչ և նշանակում այս: Այս նշանակում ե, վոր նա ավելի զարգացրեց Մարքսի—Ենգելսի ուսմունքը՝ զարգացման նոր պայմաններին համապատասխան, կապիտալիզմի նոր փուլին համապատասխան, իմպերիալիզմին համապատասխան կերպով: Այս նշանակում ե, վոր գասակարգային կոմիտեն նոր պայմաններում ավելի զարգացնելով Մարքսի ուսմունքը՝ Լենինը մարքսիզմի ընդհանուր գանձարանը մացրեց ինչ-վոր նոր բան՝ համեմատած այն բանի հետ, ինչ վոր Մարքսն ու Ենգելսն եյին ավել համեմատած այն բանի հետ, ինչ կարող եր տրվել մինչիմպերիալիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում, ընդվորում այդ նորը, վոր Լենինը մացրել ե մարքսիզմի գանձարանը, ամրողապես ու լիովին խարսխված ե Մարքսի ու Ենգելսի աված սկզբունքների վրա: Հենց այս իմաստով ե, վոր մեղանում խոսվում ե լենինիզմի՝ վորպես իմպերիալիզմի ու պլուտարքական հեղափոխությունների զարարջանի մարք-

սիզմի՝ մասին։ Ահա միքանի հարցեր, վորոնց բնադրավառում կե-  
նինը նոր բան և տվել՝ ավելի զարգացնելով Մարքսի ուսմուռքը։

Նախ՝ մոնոպոլի՝ տական կապիտալիզմի հարցը, իմակերիա-  
լիզմի՝ վորպես կապիտալիզմի նոր փուլի՝ հարցը։ Մարքսն ու  
ենդեւսը «Կապիտալում» տվել են կապիտալիզմի հիմունքների  
վերլուծությունը։ Բայց Մարքսն ու ենդեւսն ապրում եյին մինչ-  
մոնոպոլիստական կապիտալիզմի տիրապետության ժամանակա-  
շրջանում, կապիտալիզմի սահուն եվոլուցիս կատարելու և ամ-  
բողջ յերկրագնդի վրա նրա «Խաղաղ» տարածման ժամանակա-  
շրջանում։ Այդ հին փուլն ավարտվեց XIX դարի վերջին և  
XX-ի սկզբին, յերբ Մարքսն ու ենդեւսն արդեն կենդանի չէյին։  
Հասկանալի յե, վոր Մարքսն ու ենդեւսը կարող եյին լոկ կատ-  
հել կապիտալիզմի զարգացման այն նոր պայմանների մասին,  
վորոնք վրա հասան կապիտալիզմի հին փուլն հաջորդելու յե-  
կած նոր փուլի կապակցությամբ, զարգացման իմակերիալիստա-  
կան, մոնոպոլիստական փուլի կապակցությամբ, յերբ կապիտա-  
լիզմի սահուն եվոլուցիս կատարելուն փոխարենսց կապիտալիզմի  
թուիչքաձև, կատաստրոֆիկ զարգացումը, յերբ զարգացման ան-  
հավասարաչափությունն ու կապիտալիզմի հակասությունները  
հանդես յեկան առանձին ուժգնությամբ, յերբ վաճառահանման  
շուկաների ու կապիտալի արտահանման համար մղվող պայքարը  
զարգացման ծայրանեղ անհավասարաչափության պայմաններուն  
անխուսափելի զարձրեց իմակերիալիստական պարբերական պատե-  
րազմներն աշխարհի ու ազգեցության վոլորտների պարբերական  
վերաբերածանութների համար։ Լենինի մատուցած ծառայությունը  
և, հետեւապես, Լենինի մոտ նորն այսուղ այն և, վոր նա, հեն-  
վելով «կապիտալի» հիմնական գրություների վրա, տվեց իմակերիա-  
լիզմի՝ վորպես կապիտալիզմի վերջին փուլի՝ հիմնավորված մարք-  
սիստական վերլուծությունը, բաց անելով նրա խոցերն ու նրա  
անխուսափելի կործանման պայմանները։ Այս վերլուծության  
բաղայի վրա ծագեց Լենինի հայտնի գրություն այն մասին, վոր  
իմակերիալիզմի պայմաններում հնարավոր և սոցիալիզմի հաղ-  
թությունը առանձին, ջոկ վերցրած կապիտալիստական յերկիր-  
ներում։

Յերկրորդ, պրոլետարիատի դիկտատուրայի հարցը։ Պրոլե-  
տարիատի դիկտատուրայի՝ վորպես պրոլետարիատի քաղաքական  
տիրապետության և վորպես կապիտալի իշխանությունը բռնու-  
թյան միջոցով տապալելու մեթոդի՝ հիմնական զաղափարը տվել

Են Մարքսն ու Ենգելսը: Լենինի մոտ նորն այս բնագավառում այն և, վոր ա) նա հայտնագործեց խորհրդային իշխանությունը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձեռ դրա համար ուժագործելով Փարիզի Կոմունայի և ուռական հեղափոխության փորձը, բ) պրոլետարիատի դաշնակիցների վերաբերյալ պրոլետարիատի տեսանկյունով նա բացեց պրոլետարիատի դիկտատուրայի Փորմուլայի փակադերը, պրոլետարիատի դիկտատուրան բնորոշելով վորպես դեկավար հանդիսացող պրոլետարիատի դասակարգային դաշնաքի հատուկ ձև վոչպրոլետարական դասակարգերի (գյուղացիության և այլ) շահագործվորդ մասսաների հետ, վորոնք դեկավարվող են հանդիսանում, գ) նա առանձին ուժով ընդգծեց այն փաստը, վոր դասակարգային հասարակության պայմաններում պրոլետարիատի դիկտատուրան դեմոկրատիայի ամենաբարձր տիպն ե, պրոլետարական դեմոկրատիայի ձեւը, վորն արտահայտում ե մեծամասնության (շահագործվողների) շահերը, —ի հակակըլիու կապիտալիստական դեմոկրատիայի, վորն արտահայտում ե փոքրամասնության (շահագործվողների) շահերը:

Յերրորդ, սոցիալիզմի հաջող կառուցման ձեւերի ու յեղանակների հարցը պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում, կապիտալիզմից վեպի սոցիալիզմ ձգվող անցողիկ ժամանակաշրջանում, մի յերկրում, վոր շրջապատված ե կապիտալիստական պետություններով: Մարքսն ու Ենգելսը դիտում եին պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանը վորպես ավելի կամ պակաս յերկարածե մի ժամանակաշրջան, վորը լի յենեղափոխական գոտեմարտերով ու քաղաքացիական պատերազմներով, վորի տեսողության ընթացքում պրոլետարիատը, իշխանության գլուխ կանգնած լինելով, ձեռք ե առնում տնտեսական, քաղաքական, կուլտուրական ու կազմակերպական բնույթի միջոցներ, վորոնք անհրաժեշտ են հին կապիտալիստական հասարակության փոխարեն նոր սոցիալիստական հասարակություն, առանց դասակարգերի հասարակություն, առանց պետության հասարակություն ստեղծելու համար: Լենինն ամբողջապես ու լիովին կանգնած եր Մարքսի ու Ենգելսի այս հիմնական դրույթների հողի վրա: Լենինի մոտ այս բնագավառում նորն այն ե, վոր ա) նա հիմնավորեց լիակատար սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորությունն իմպերիալիստական պետություններով շրջապատված պրոլետարիատի դիկտատուրայի

յերկրում, պայմանով, վոր այդ յերկրը չխեղդվի շրջապատող կապիտալիստական պետությունների ռազմական ինտերվենցիայի կողմից. բ) նա ուրվագծեց տնտեսական քաղաքականության կոնկրետ ուղիները («նոր տնտեսական քաղաքականություն»), վորոնց ոգնությամբ պրոլետարիատը, իր ձեռքին ունենալով տնտեսական իշխող բարձունքները (արգյունաբերությունը, հողը, արանսապրությունը, բանկերը և այլն)<sup>4</sup> սոցիալիզմացիայի յենթարկած ինդուստրիան զոգումն եւ գյուղացիական տնտեսության հետ («ինդուստրիայի զոգումը գյուղացիական տնտեսության հետ») և այդպիսով ամրությունով ժողովրդական տնտեսությունը տանում եւ գեղականությունը, դ) նա ուրվագծեց գյուղացիության հիմնական մասսաներին կոռպերացիայի միջոցով աստիճանաբար մոտեցնելու և սոցիալիստական շինարարության հունի մեջ ներդրավելու կոնվենտ ուղիները, կոռպերացիայի, վոր ներկայացնում եւ գյուղացիական մանր տնտեսության վերակերտման ու գյուղացիության հիմնական մասսաներին սոցիալիզմի վոգով վերադաստիարակելու մեծագույն մի միջոց պրոլետարիատի դիկոստուրայի ձեռքին:

Չորրորդ, պրոլետարիատի հեգեմոնիայի հարցը՝ հեղափոխության, ամեն մի ժողովրդական հեղափոխության մեջ, ինչպես ցարիզմի գեմ ուղղված հեղափոխության, այնպես ել կապիտալիզմի գեմ ուղղված հեղափոխության մեջ: Մարքսն ու Ֆենգելը տվել են պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի հիմնական ուրվագծերը: Լենինի մոտ այստեղ նորն այն է, վոր նա ավելի զարգացրեց ու ծավալեց այդ ուրվագծերը՝ դրանք վերածելով պրոլետարիատի հեգեմոնիայի մի կուռ սիստեմի, քաղաքի ու գյուղի աշխատավոր մասսաներին վնչ միայն ցարիզմի ու կապիտալիզմի տապալման գործում, այլև պրոլետարիատի դիկտատուրայի որով սոցիալիստական շինարարության գործում պրոլետարիատի կողմից դեկավարելու մի կուռ սիստեմի: Հայտնի յեւ, վոր պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը Լենինի ու նրա կուսակցության շնորհիվ վարպետային կիրառում գտավ Ռուսաստանում: Ի միջի այլոց սրանով և բացարձում այն վաստը, վոր հեղափոխությունը Ռուսաստանում հանգեցրեց պրոլետարիատի իշխանությանը: Առաջներում սովորաբար բանն այնպես եր տեղի ունենում, վոր հեղափոխության ժամանակ բարձրիկաների վրա կուռում ելին բանվորները, նրանք արյուն ելին թափում, նրանք տապալում եյին հինը, իսկ իշխանությունն

ընկնում եր բուրժուաների ձեռքը, վորոնք հետո ճնշում ու շահագործում եյին բանվորներին։ Բանն այսպիս և յեղել Անդլիայում ու Ֆրանսիայում։ Բանն այսպիս և յեղել Գերմանիայում։ Մեղանում, Ռուսաստանում, բանն ուրիշ ընթացք ստացավ։ Մեղանում բանվորները հեղափոխության հարվածային ուժը չեյին միայն։ Եինելով հեղափոխության հարվածային ուժը՝ ուռւսական պրոլետարիատը զբա հետ մեկտեղ ջանում եր լինել քաղաքի ու դյուզի բուրժուարժործվող մասսաների հեկեմոնը, քաղաքական դեկադարը՝ նբանց իր շուրջը համախմբելով, նբանց բուրժուարժուայից պոկելով, քաղաքականապիս մեկուսացնելով բուրժուարժուային։ Իսկ շահագործվող մասսաների հեկեմոնը լիներով՝ ուռւսական պրոլետարիատն ամրող ժամանակ պայքարում եր հանուն այն բանի, վոր իշխանությունն իր ձեռքը վերցնի և այն ոգտագործի իր սեփական շահերի համար՝ բուրժուարժիայի դեմ, կապիտալիզմի դեմ։ Իսկապիս սրանով ել բացարձում և այն, վոր հեղափոխության յուրաքանչյուր հոռեկու յելույթը Ռուսաստանում, ինչպես 1905 թվականի հոկտեմբերին, այնպիս ել 1917 թվականի փետրվարին, աստղաբեկ եր մզում բանվորական պատգամավորների խորհուրդները, վորպիս իշխանության նոր ապարատի սաղմեր, — ապարատ, վորը կոչված և ճնշելու բուրժուարժուայինն, — ի հակակցիու բուրժուական պարլամենտի, վորպիս իշխանության հին ապարատի, վորը կոչված և ճնշելու պրոլետարիատին։ Բուրժուարժիան մեզանում յերկու անդամ փորձել և վերականգնել բուրժուարժիան պարլամենտը և վերջ դնել խորհուրդներին — 1917 թ. ոգոստոսին, «Նախապարագենտի» ժամանակ, մինչև ըսլցեկիների կողմից իշխանությունը վերցնելը, և 1918 թ. հունվարին, «Սահմանադիր Ժողովի» ժամանակ, իշխանությունը պրոլետարիատի կողմից վերցվելուց հետո, — ու ամեն անդամ պարտություն և կրել ինչու վորովհետեւ բուրժուարժիան արդեն քաղաքականապիս մեկուսացված եր, աշխատավորների միլիոնավոր մասսաները պրոլետարիատին եյին համարում հեղափոխության միակ առաջնորդը, իսկ մասսաներն արգեն ստուգել ու փորձել եյին խորհուրդները, վորպիս իրենց բանվորական իշխանությունը, վորին բուրժուական պարլամենտի հետ փոխելը պրոլետարիատի համար ինքնասպանություն կլիներ։ Ուստի զարմանալի չե, վոր բուրժուական պարլամենտարիզմը մեզ մոտ չպատվաստվեց։ Ահա թե ինչու հեղափոխությունը Ռուսաստանում հասցընց պրոլետարիատի իշխանությանը։ Մրանք են հեղափոխ

խության մեջ պլուկտարիատի հեղեմոնիայի լինինյան սիստեմը  
կենսագործելու արդյունքները:

Հինգերորդ, ազգային-գաղութային հարցը: Մարքսն ու Են-  
գելսը, իր ժամանակին վերլուծելով Խոլանդիայում, Հնդկաստա-  
նում, Չինաստանում, Կենտրոնական Յեղոսպայի յերկիրներում,  
Ենաստանում, Հունգարիայում տեղի ունեցող անցքերը,—տվին  
ազգային-գաղութային հարցի հիմնական, մեկնակետային գաղա-  
փարները: Լենինն իր աշխատություններում հիմնվում էր այդ  
գաղափարների վրա: Լենինի մոտ այս բնագավառում նորն այն  
է, վոր ա) նա ի մի հավաքեց այդ գաղափարները և իմպերիա-  
լիզմի դարաշրջանի ազգային-գաղութային հեղափոխությունների  
վերաբերյալ հայացքների կուռ սիստեմի վերածեց. բ) ազգային-  
գաղութային հարցը կապեց իմպերիալիզմի տապալման հարցի հետ.  
գ) ազգային-գաղութային հարցը միջազգային պրոլետարական  
հեղափոխության ընդհանուր հարցի բազկացուցիչ մասը հայ-  
տարարեց:

Վերջապես, պրոլետարիատի կուսակցության վերաբերյալ  
հարցը: Մարքսն ու Ենդելսը տվել են հիմնական ուրվագծեր կու-  
սակցության՝ վորպես պրոլետարիատի առաջավոր ջոկատի՝ մա-  
սն, առանց վորի (առանց կուսակցության) պրոլետարիատը չի  
կարող հասնել իր ազատազրմանը վճռ իշխանությունը վերցնե-  
լու իմաստով, վճռ ել կապիտալիստական հասարակությունը վե-  
րակառուցելու իմաստով: Լենինի մոտ այս բնագավառում նորն  
այն է, վոր նա ավելի զարգացրեց այդ ուրվագծերը՝ համապա-  
տասխան պրոլետարիատի պայքարի նոր պայմաններին իմպերի-  
ալիզմի ժամանակաշրջանում, ցույց տալով, վոր ա) կուսակցու-  
թյունը պրոլետարիատի դասակարգային կազմակերպության  
բարձրագույն ձևն և համեմատած պրոլետարիատի կազմակերպու-  
թյան այլ ձևերի հետ (արհմիություններ, կոոպերացիա, պետա-  
կան կազմակերպություն), վորոնց աշխատանքը նաև կոչված է  
ընդհանրացնելու. և նրան ուղղություն տալու. բ) պրոլետարիա-  
տի գիտատուրան լիակատար կարող է լինել միայն այն գեպ-  
քում, յեթև նրան գեկավարում և մի կուսակցություն, կոմու-  
նիստների կուսակցությունը, վորը գեկավարությունը չի բաժա-  
նում և չպետք է բաժանի այլ կուսակցությունների հետ. դ) ա-  
ռանց կուսակցության մեջ յերկաթե կարգապահություն ունենա-

լու չեն կարող իրականացվել պըոլետարիատի դիկտատուրայի խնդիրները շահագործողներին մնշելու և գասակարգային հասարակությունը սոցիալիստական հասարակության վերակառուցելու վերաբերյալ:

Ահա հիմնականում այն նորը, ինչ տվել ե լենինն իր աշխատություններում՝ կոնկրետացնելով ու ավելի գարգացնելով Մարքսի ուսմունքը՝ համապատասխան պըոլետարիատի պայքարի նոր պայմաններին իմպերիալիզմի ժամանակաշրջանում:

Հենց այս պատճառով ե, վոր մեզանում ասում են, թե լենինիդան իմպերիալիզմի ու պըոլետարական հեղափոխությունների գարաշրջանի մարքսիզմն ե:

Սրանից յերեսում ե, վոր լենինիզմը չի կարելի վոչ բաժանել մարքսիզմից, վոչ ել առավել և հակադրել մարքսիզմին:

Պատվիրակության տված հարցի մեջ այնուհետև ասված ե. «Ճիշտ» կլինիք արդյոք ասել թե լենինը հավատում եր սատեղ-ծագործական հեղափոխությանը», մինչդեռ Մարքսն ավելի հակամատ եր սպասելու անտեսական ուժերի գաղաթնակետային գարգացմանը»: Յես կարծում եմ, վոր այսպիս ասելը միանգաւմայն սխալ կլինիք: Յես կարծում եմ, վոր ամեն մի ժողովրդական հեղափոխություն, յեթե նա խկապես ժողովրդական հեղափոխություն ե, ուրեմն ստեղծագործական հեղափոխություն ե, վորտվիկու նա ջարդում ե հին կացութաձեռ և կերտում, ստեղծում և նորը իհարկե, վոչ մի ստեղծագործական բան չի կարող լինել թող ներդի ասել, այնպիսի «հեղափոխություններում», վորպիսիք յերբեմն լինում են, ասենք, Ալբանիայում՝ մի շարք ցեղերի կողմից մյուսների գեր հարուցվող խաղալիքային «ապրատամբությունների» ձևով: Բայց մարքսիստներն այդպիսի խաղալիքային «ապատամբությունները» յերբեք հեղափոխություն չեն համարել Ակներե ե, վոր խսոքն այդպիսի «ապատամբությունների» մասին չե, այլ ժողովրդական մասսայական հեղափոխության մասին ե, վորը հարստանարկված գասակարգերին վոաքի յե հանում հարստանարող գասակարգերի վեմ: Իսկ այսպիսի հեղափոխությունը չի կարող ստեղծագործական չլինել: Մարքսն ու Լենինը կողմնակից եյին հենց այսպիսի հեղափոխության, —և միայն այսպիսի հեղափոխության: Ընդումին հասկանալի յե, վոր այսպիսի հեղափոխությունը չի կարող ծագել ամեն պայմաններում, վոր նա կարող է բորբոքվել անտեսական ու քաղաքական կարգի վորոշ բարենպատ պայմաններում միայն:

2-րդ ՀԱՅՑ: Կարելի՞ յե արքյոք տսել, թե կոմիուսակցաւրբունքը վերահսկում է կառավարությանը:

ՊԱՏՍԱՍԽԵՆՆ: Ամեն ինչ կախված է այս բանից, թե ինչպիս հասկանանք վերահսկողությունը: Կապիտալիստական յերկիրներում վերահսկողությունը մի քիչ յուրոքինակ կերպով և համեցվում: Յես գիտեմ, վոր մի ամբողջ շաբք կապիտալիստական կառավարություններ վերահսկողության հն յենթարկվում խոշորագույն բանկերի կողմից, չնայած «գեմովրատական» պառլամենտների գոյությանը: Պառլամենտները հավատացնում են, թե հենց իրենք են վերահսկում կառավարություններին: Իսկ իրականում այնպիս և լինում, վոր խոշորագույն ֆինանսական կոնսորցիումներն են կանխորչում կառավարությունների կազմն ու վերահսկողության յենթարկում: Նրանց գործողությունները: Ո՞ւժ հայտնի չե, վոր վոչ մի կապիտալիստական «տերության» մեջ չե կարող կարինեալ կազմվել խոշորագույն ֆինանսական տուղերի կամքի հակառակ, բավական և ֆինանսական ձնում գործ գնել, — և մինխարճները դիվահարների պես կթուչն իրենց պոստերից: Սա խական բանկերի վերահսկողություն և կառավարությունների նկատմամբ՝ հակառակ պառլամենտների յերեակայական վերահսկողության: Յեթե խոսքն այսպիսի վերահսկողության մասին ե, ապա յես պետք և հայտարարեն, վոր զրամապարկերի վերահսկողությունը կառավարության նկատմամբ մեղանում աներեակայելի յե ու միանգամայն բացաված, թեև կուզ հենց այն պատճառով, վոր մեղանում բանկերը վաղուց ազգայնացված են, եսկ զրամապարկերը գուրս են շաբաված ԽՍՀՄ-ից:

Գուցեն պատիրակությունը ցանկանում եր հարցնել վոչ թե վերահսկողության մասին, այլ կուսակցության կողմից կառավարությանը ղեկավարելու մասին: Յեթե պատիրակությունը ցանկանում եր այս մասին հարցնել, ապա յես պատասխանում եմ: այն, կուսակցությունը մեզ մոտ ղեկավարում է կառավարությանը: Իսկ այս ղեկավարությունը հաջողվում է այն պատճառով, վոր կուսակցությունը մեղանում վայելում և բանվորների ու ընդհանրապես աշխատավորների մեծամասնության վստահությունը և նա իրավունք ունի այդ մեծամասնության անունով ղեկավարելու կառավարության որդաններին:

Խնչով և արտահայտվում կառավարության ղեկավարումը ԽՍՀՄ-ի բանվորական կուսակցության կողմից, ԽՍՀՄ-ի կոմունիստական կուսակցության կողմից:

Նախ և առաջ՝ նրանով, վոր մեր յերկրում պիտական աշխատանքի հիմնական պրատերի համար կումկուսակցությունը ջանում ե խորհուրդների ու նրանց համագումարների միջոցով անցկացնել իր թեկնածուներին, իր լավագույն աշխատողներին, վորոնք նվիրված են պրոլետարիատի գործին և պատրաստ են հավատով ու ճշմարտությամբ ծառայելու պրոլետարիատին: Յեզ այս նրան հաջողվում է հսկայական մեծամասնություն կազմող դեպքերում, վորովհետև բանվորներն ու դյուղացիները վստահությամբ են վերաբերվում կուսակցությանը: Սա պատահականություն չե, վոր իշխանության որդանների ղեկավարներ մեղանում հանդիսանում են կոմունիստները, վոր նրանք, այդ ղեկավարները, հսկայական հեղինակություն են վայելում յերկրում:

Յերկրորդ՝ նրանով, վոր կուսակցությունն ստուգում և կառավարչության որդանների աշխատանքը, իշխանության որդանների աշխատանքը՝ ուղղելով սխալներն ու թերությունները, առանց վորոնց չի լինում, —ոգնելով նրանց կենսագործելու կառավարության վճրուներն ու աշխատելով ատահովել մասսաների աջակցությունը նրանց, ընդուրում նրանք վոչ մի կարևոր վճրու չեն ընդունում առանց կուսակցության համապատասխան ցուցումների:

Յերրորդ՝ նրանով, վոր իշխանության այս կամ այն որդանների աշխատանքի պլանը մշակեիս, լինի գա արդյունաբերության ու գյուղատնտեսության գծով, թե առեւտրի ու կուլտուրական շինարարության գծով, կուսակցությունը տալիս և ընդհանուր ղեկավար ցուցումներ, վորոնք վորոշում են այդ որդանների աշխատանքի ընույթն ու ուղղությունն այդ պլանների գործողության ժամանակվա համար:

Բուրժուական մամուլը սովորաբար «զարմանք» և արտահայտում կուսակցության կողմից պետության գործերին այսպես «միջմատերու» առթիվ: Բայց այդ «զարմանքն» ամբողջովին կեղծ է: Հայտնի չե, վոր բուրժուական կուսակցությունները կապիտալիստական յերկիրներում ճիշտ նույնպես «միջամտում են» պետության գործերին ու ղեկավարում կառավարություններին, ընդուրում ղեկավարությունն այնուել կենտրոնանում և խոչըր բանկերի հետ այս կամ այն կերպ կապված և իրենց ղերը, այդ պատճառով, բնակչությունից թագյանի ջանացող անձերի մի ներ շրջանի ձեռքում: Ում հայտնի չե, վոր յուրաքանչյուր բուրժուական կուսակցություն Անդիայում կամ ուրիշ կապիտալիստական յերկիրներում ունի իր գաղտնի կարինետը՝ բաղկացած անձերի մի

նեղ զբջանից, վորոնք իրենց ձեռքում են կենտրոնացնում դեկա-  
վարությունը: Վերհիշեցիք թեկուղ Լոյդի Զորջի հայտնի ճառը  
լիբերալ կուսակցության «առվերային» կարինեաի մասին: Այս  
տեսակետից տարբերությունը Խորհուրդների յերկրի ու կապի-  
տալիստական յերկիրների միջև այն ե, վոր ա) կապիտալիզմի  
յերկիրներում բուրժուական կուսակցությունները պետությունը  
զեկավարում են բուրժուաղիսի շահերի համար ու պրոլետարիա-  
տի գեմ, մինչդեռ ԽՍՀՄ-ում կոմկուսակցությունը պետությունը  
զեկավարում ե պրոլետարիատի շահերի համար ու բուրժուաղիս-  
յի գեմ, բ) բուրժուական կուսակցությունները թագցնում են  
ժողովրդից իրենց զեկավար դերը՝ դիմելով կասկածելի գաղտնի  
կարինեաների ողնությանը, մինչդեռ կոմկուսակցությունը ԽՍՀՄ-  
ում կարող չե վոչ մի զաղանի կարինեատի, նու նշաղակիում և  
գաղտնի կարինեաների քաղաքականությունն ու պրակտիկան և  
բացորոշ հայտարարում և ամբողջ յերկրի առաջ, վոր ինքն իբ-  
րա յև վերցնում պետության զեկավարման պատասխանատվու-  
թյունը:

Պատվիրակներից մեկը՝ Նույն այդ հիմունքներով և կուսակ-  
ցությունը զեկավարում արհմիություններին:

Ստալին: Հիմնականում—այս: Ձեականորեն կուսակցությունն  
արհմիություններին վոչ մի դիրեկտիվ չի կարող տալի Բայց կու-  
սակցությունը դիրեկտիվի մաս արհմիություններում աշ-  
խատող կոմունիստներին: Հայտնի յի, վոր արհմիություններում  
կան կոմունիստների ֆրակցիաներ, ճիշտ այնպես, ինչպես նաև  
խորհուրդներում, կոոպերացիայում և այլն: Այդ կոմունիստական  
ֆրակցիաների պարտականությունն այն ե, վոր համոզելու միջո-  
ցով՝ արհմիությունների, խորհուրդների, կոոպերացիայի և այլ  
որգաններում ընդունել տան այնպիսի վճիռներ, վորոնք համա-  
պատասխանում են կուսակցության դիրեկտիվներին: Յեթ այս  
նրանց հաջողվում ե իրականացնել հսկայական մեծամասնություն  
կազմող դեպքերում, վորովհետեւ կուսակցության ազդեցությունը  
մասսաների մեջ հսկայական ե, և նա այնուեղ մեծ վստահություն  
և վայելում: Այս ճանապարհով ենք հասնում պրոլետարիատի  
ամենաբարդագույն կազմակերպությունների գործողությունների  
միանականությանը: Առանց դրան մենք տարբնթացությունն ու  
տարագարկ կունենայինք բանվոր դաստիարակի այս կազմակեր-  
պությունների աշխատանքում:

3-րդ ՀՍ.Բ.Յ: Վարչափով վար Ռուսաստանում լիգալ և միայն մի-  
14

կուսակցության, դուք վի՞րտեղից գիտեք, վոր մասսաները համակրուժ են կոմունիզմին:

ՊԱՏԾԱԿՈՒՅՆ: Այդ ճիշտ է, վոր ԽՍՀՄ-ում չկան բուրժուական լեռակ կուսակցություններ, վոր այնտեղ լեռակությունից ոդտվում է միայն մի կուսակցություն՝ բանվորների կուսակցությունը, կոմունիստների կուսակցությունը։ Սակայն մենք ունենք արդյոք ճանապարհներ ու միջոցներ՝ համոզվելու այն բանին, վոր բանվորների մեծամասնությունը, աշխատավորական մասսաների մեծամասնությունը համակրում է կոմունիստներին։ Խոսքը վերաբերում է, ինարկե, բանվորական ու գյուղացիական մասսաներին, այլ վոչ թե նոր բուրժուազիային, այլ վոչ թե հին շահագործողական դասակարգերի բեկորներին, վորոնց պրոլետարիատն արդին ջախջախել է։ Այն, մենք հնարավորություն ունենք, մենք ունենք ճանապարհներ ու միջոցներ՝ իմանալու, թե բանվորական ու գյուղացիական մասսաները համակրում են արդյոք, թե չեն համակրում կոմունիստներին։ Վերցնենք մեր յերկը կյանքի կարևորագույն մոմենտները և տեսնենք, արդյոք հիմք կմ պնդելու, վոր մասսաներն իսկապես համակրում են կոմունիստներին։

Վերցնենք, ամենից առաջ, այնպիսի կարեւոր մոմենտ, ինչպես Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակաշրջանն է 1917 թվականին, յերբ կոմունիստների կուսակցությունը, հենց վորպես կուսակցություն, բացորոշ կոչ եր անում բանվորներին ու գյուղացիներին՝ տապալելու բուրժուազիայի իշխանությունը, և յերբ նաև, այդ կուսակցությունը, ստացավ բանվորների, գինավորների ու գյուղացիների հսկայական մեծամասնության աջակցությունը։ Ի՞նչպես եր այն ժամանակ իրադրությունը Իշխանության դլուխ կանգնած է յին սոցիալիստ-հեղափոխականներն (ես-երներն) ու սոցիալ-դեմոկրատները (մենակերպները), վորոնք բլոկ եյին կազմել բուրժուազիայի հետ։ Իշխանության ապարատը կենտրոնում ու տեղերում, ճիշտ այնպես, ինչպես նույն քսան միլիոնանոց բանակի հրամանատարության ապարատը, գտնվում եր այդ կուսակցությունների ձեռքում, կառավարության ձեռքում։ Կոմունիստների կուսակցությունը գտնվում եր կիսալիգալ վիճակում։ Բոլոր յերկիրների բուրժուատները գուշակում եյին բոլշևիկների կուսակցության անխռուսակելի տապալումը։ Անտանտն ամբողջապես ու միովին կերպնակու կառավարության կողմն եր կանգնած։ Բայց և այնպես կոմունիստների կուսակցությունը, բոլշևիկների կուսակցությունը չեր գաղարում պրոլետարիատին կոչ անելուց՝ տապա-

լեռու այդ կառավարությունը և հաստատելու պրոլետարիատի դիկտատորաց: Յեկ Բնչչ: Աշխատավոր մասսաների հսկայական մեծամասնությունը թիկունքում ու ճակատում ամենավճռական կերպով աջակցեց բոլշևիկների կուսակցությանը, — և Կերենսկու կառավարությունը տատարվեց, պրոլետարիատի իշխանությունը հաստատվեց: Ի՞նչպես կարող եր պատահել, վոր բոլշևիկներն այն ժամանակ հաղթող դուրս յեկան՝ չնայած բոլոր յերկիրների բուրժուաների թշնամական գուշակություններին՝ բոլշևիկների կուսակցության կործանման մասին: Արդյոք այս հանգումանքը չի ապացուցում, վոր աշխատավորների լայն մասսաները համարում են բոլշևիկների կուսակցությանը: Յես կարծում եմ, վոր ապացուցում եւ: Այս ձեզ բնակչության լայն մասսաներում կոռմունիստների կուսակցության ունեցած հեղինակության ու ազդեցության առաջին ստուգումը:

Վեցցնենք հետեւյալ ժամանակաշրջանը, ինտերվլենցիայի ժամանակաշրջանը, քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանը, յերբ անդիմական կապիտալիստներն ոկուտացիայի եյն յենթարկել Ռուսաստանի Հյուսիսը, Արևանդելսկի ու Մուրմանի շրջանը, յերբ ամերիկյան, անգլիական, ճապոնական ու ֆրանսական կապիտալիստներն սկսուացիայի եյն յենթարկել Սիբիրը՝ առաջ քայիլով կոչակին, յերբ ֆրանսական ու անգլիական կապիտալիստները «Ռուսաստանի Հարավի» ոկուտացիայի քայլեր ձեռնարկեցին, վահանի վրա բարձրացնելով Դինիկինին ու Վրանդելին: Դա Անտանատի ու Ռուսաստանի հակածեղափոխական գեներացների պատերազմն եր Մուկվայի կոմունիստական կառավարություն գեմ, մեր հեղափոխության հոկտեմբերյան նվաճումների գեմ: Դա բանվորների ու դյուզացիների լայն մասսաներում կոռմունիստների կուսակցության ունեցած ուժն ու կայունությունը մեծապույն ստուգման յենթարկելու ժամանակաշրջանն եր: Յեկ Բնչչ: Միթե հայտնի չե՞ն, վոր քաղաքացիական պատերազմի արդյունքն այն յեղափ, վոր ոկուտանատները դուրս ջպրտեցին Ռուսաստանից, իսկ հակածեղափոխական գեներացներին կարմիր բանակը կոտրցից: Այս հենց այսուղ պարզվեց, վոր պատերազմի բախտը վերջին հաշվով՝ վճռում ե վնչ թե աելինիկան, վոր առաստորին մատակարարում եյին կոչակին ու Դինիկինին ԽՍՀՄ-ի թշնամիները, այլ ճիշտ քաղաքականությունը, բնակչության միլիոնավոր մասսաների համակրանքն ու աջակցությունը: Պատահական բան ե արդյոք, վոր բոլշևիկների կուսակցությունը

այն ժամանակ հաղթող դուրս յեկալ: Իհարկե, պատահական բան չեւ: Այս հանգամանքը չի խոսում արդյոք այն մասին, զոր կոմունիստների կուսակցությունը մեղ մոտ վայելում և աշխատավորների բայն մասաների համակրանքը: Յեւ կարծում եմ, վոր խոսում եւ: Ահա ձեզ ԽՍՀՄ-ում կոմունիստական կուսակցության ունեցած ուժի ու կայունության յերկրորդ ստուգումը:

Սնցնենք ներկա ժամանակաշրջանին, նետպատիրազմյան ժամանակաշրջանին, յերբ ներթի դրվեցին խաղաղ զինարարության հարցերը, յերբ տնտեսական ավերմունքի շրջանին փոխարինեց ինդուստրիալի վերականգնման շրջանը, վերջապես՝ մեր ամբողջ ժողովրդական տնտեսությունը տեխնիկական նոր բազայի վրա վերակառուցելու շրջանը: Արդյոք այժմ ճանապարհներ ու միջոցներ ունենք մենք, զորպեսդի ստուգինք կոմունիստների կուսակցության ուժն ու կայունությունը, զորպեսդի վորոշենք աշխատավորների բայն մասաների կողմից գեպի այս կուսակցությունը տածվող համակրանքի աստիճանը: Յեւ կարծում եմ, վոր ունենք:

A 6812  
456

Վերցնենք ամենից առաջ արհմիությունները, վորոնք միաւ վորում են մոտ 10 միլիոն պրոլետարներ, տեսնենք մեր արհմիությունների զեկավար որդանների կազմը: Պատահական և արդյոք, վոր այս որդանների գլուխ կոմունիստներն են կանգնած: Իհարկե, պատահական չեւ: Հիմար բան կլիներ կարծել թե ԽՍՀՄ-ի բանակորներն անտարեր են վերաբերվում դեպի արհմիությունների զեկավար որդանների կատմը: ԽՍՀՄ-ի բանվորներն աճել ու դաստիարակվել են յերեք հեղափախությունների փոթորկի մեջ: Վոչ վոք այնպիս չի սովորել, ինչպիս նրանք՝ ստուգել իրենց զեկավարներին և նրանց գուցս շարտել, յեթե նրանք պրոլետարիատի շահերին չեն բավարարում: Մեր կուսակցության մեջ մի ժամանակ ամենամողովրդական մարդը Պետանովը եր: Սակայն բանվորները կանգ չառան այն բանի առաջ, վորպեսդի վճռաբար մեկուսացնեն նրան, յերբ նրանք համոզվեցին, վոր Պետանովը հեռացել և պրոլետարական գծից: Յեվ յեթե այդպիսի բանվորներն արտահայտում են իրենց լիակատար վստահությունը կոմունիստներին՝ նրանց առաջ քաշելով արհմիություններում պատասխանատու պղստերի համար, ապա այդ չի կարող ուղղակի մատնանշումն չծառայել այն բանի, վոր կոմունիստական կուսակցության ուժն ու կայունությունը ԽՍՀՄ-ի բանվորների շրջանում — հսկայական են: Ահա ձեզ ստուգումն այն բանի, վոր

Պետանովը հեռացել և պրոլետարական գծից: Յեվ յեթե այդպիսի բանվորներն արտահայտում են իրենց լիակատար վստահությունը կոմունիստներին՝ նրանց առաջ քաշելով արհմիություններում պատասխանատու պղստերի համար, ապա այդ չի կարող ուղղակի մատնանշումն չծառայել այն բանի, վոր կոմունիստական կուսակցության ուժն ու կայունությունը ԽՍՀՄ-ի բանվորների շրջանում — հսկայական են: Ահա ձեզ ստուգումն այն բանի, վոր



բաննվորների լայն մասսաներն անպայման համակրում են կոմունիստների կուսակցությանը:

Վերցնենք խորհուրդների վերջին ընտրությունները: Մեզանում խորհուրդների ընտրության իրավունք վայելում և ԽՍՀՄ-ի ամբողջ չափահաս ընակչությունը սկսած 18 տարեկան հասակից, առանց սեռի ու ազգության խարության, մինուս ըուրժուական տարեկը, վորոնք շահագործում են ուրիշի աշխատանքը և զրկված են ընտրական իրավունքներից: Այդ կազմում և մոտ 60 միլիոն ընտրող: Դրանց հսկայական մեծամասնությունը, ինտերկե, դյուզացիներն են: Այդ 60 միլիոնից ընտրական իրավունքներն իրականացրին մոտ 51 տոկ, այսինքն՝ 30 միլիոնից ավելին: Հիմա աչքի անցկացրեք մեր խորհուրդների ղեկավար որդանների կազմը կենտրոնում ու տեղերում: Կարելի՞ յեւ արդյոք պատահականություն անվանել այն փաստը, վոր ընտրովի ղեկավար տարբերի հսկայական մեծամասնությունը կոմունիստներն են կազմում: Պարզ է, վոր այս չի կարելի պատահականություն անվանել: Արդյոք այս փաստը չի խոսում այն մասին, վոր կոմունիստական կուսակցությունը վստահություն և վայելում գյուղացիության միլիոնավոր մասսաների շրջանում: Յես կարծում եմ, վոր խոսում ե: Ահա ձեզ կոմունիստական կուսակցության ուժի ուժի ու կայունության դարձյալ մի ստուգում:

Վերցնենք կոմյերիամիությունը (յերիտասարդության կոմունիստական միությունը), վորը միավորում և մոտ 2 միլիոն բանվորական ու գյուղացիական յերիտասարդություն: Կարելի՞ յեւ արդյոք պատահականություն անվանել այն փաստը, վոր կոմյերիտասարդություն անվանել այս կազմում են կոմունիստները: Յես կարծում եմ, վոր այս չի կարելի պատահականություն անվանել: Ահա ձեզ կոմունիստական կուսակցության ուժի ու հեղինակության դարձյալ մի ստուգում:

Վերցնենք, վերջապես, մեր անթիվ կոնֆերենցիաները, խորհրդակցությունները, պատվիրակային ժողովները և այլն, վորոնք ընդգրկում են ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող բոլոր ու ամեն տեսակի աղջությունների աշխատավոր տղամարդկանց ու կանանց, բանվորների ու բանվորուհիների, գյուղացիների ու գեղջկուհիների միլիոնավոր մասսաներ: Այս խորհրդակցությունների ու կոնֆերենցիաների մասին Արևմուտքում յերբեմն հեղնում են՝ պնդելով

այդ խորհրդակցություններն ու կոնֆերենցիաներն ունեն հըսակայական նշանակություն ինչպես մասսաների տրամադրությունն սուռագելու խմաստով, այնպես և մեր սխալներն ի հայտ բերելու և այդ սխալները վերացնելու միջոցներ նշելու խմաստով, վրույնետե մեղանում քիչ չեն սխալները, և մենք դրանք չենք թագյունում՝ յենթադրելով, վոր սխալներն ի հայտ բերելն ու նրանք աղնվորեն ուզգելը յերկրի ղեկավարումը բարեկավելու շափառույն միջոցն և։ Աչքի անցկացրեք այդ կոնֆերենցիաների ու խորհրդակցությունների հոեաորների ճառերը, աչքի անցկացրեք բանվորներից ու գյուղացիներից յելած այդ «հասարակ ժարդարարական» ու անխորամանկ գիտողությունները, աչքի անցկացրեք նրանց վճիռները, — և գուք կտեսնեք, թե վորչափ հսկայական են կոմունխտական կուսակցության ազգեւությունն ու հեղինակությունը, գուք կտեսնեք, վոր այդ ազգեցությանն ու այդ հեղինակությանը կարող եք նախանձել աշխարհիս ամեն մի կուսակցություն։ Ահա ձեզ կոմունխտական կուսակցության կայունության գարձյալ մի ստուգում։

Ծրանք են այն ճանապարհներն ու միջոցները, վորոնք հնարավորություն են տալիս ստորգելու կոմունխտական կուսակցության ուժն ու ազգեցությունը ժողովրդական մասսաների մեջ։

Ահա թե ինձ վորտեղից և հայտնի, վոր ԽՍՀՄ-ի բանվորների ու գյուղացիների լայն մասսաները համակրում են կոմունխտական կուսակցությանը։

**4-րդ ՀԱՐՑ:** Յերե տնկուստկցական մի խումբ ֆրակցիա կազմակերպեր և ընտրույթներում տուազադրեր իր բնինածութերին, փորանք կանգնած են խորհրդային կուսակարությանն աշակեցելու պլատֆորմի վրա, բայց դրա հետ մեկտեղ արտաքին առևտերի և առաջարկի վերացում պահանջներ, — արդյոք նրանք կկարառանայի՞ն իրենց միջոցներն ունենալ և ակտիվ հաղաքական կամպանիա մղել։

**ՊԱՏԱՍԽՈԱՆ:** Յես կարծում եմ, վոր այս հարցում անհաշտելի հակասություն կա։ Անկարելի յե պատկերացնել վորմե մի խումբ, վորը կանգնած լինի խորհրդակցին կառավարությանն աջակցելու պլատֆորմի վրա և դրա հետ մեկտեղ պահանջի վերացնել արտաքին առևտերի մոնոպոլիան։ Ինչո՞ւ։ Այն պատճառով, վոր արտաքին առևտերի մոնոպոլիան խորհրդային կառավարության «պլատֆորմի» անհողողող հիմքերից մեկն և։ Այն պատշ

հառողի, վոր արտաքին առևտրի մոնոպոլիայի վերացում պահանջող խումբը չի կարող խորհրդային կառավարության աջակցելու կողմանից լինել: Այն պատճառով, վոր այլպիս խումբը էաքաղաքն և լինել միայն մի խումբ, վորը խորապես թշնամի յեւ ամբողջ խորհրդային հասարակակարգին:

ԽՍՀՄ-ում կան, ինարկե, տարրեր, վորոնք արտաքին առևտրի մոնոպոլիայի վերացումն են պահանջում: Այդ՝ նեպմաններն են, կուլակները, արգեն ջախջախված ջահաղործող դաստիարակերի բեկորները և այլն: Բայց այս տարրերը ընակչության չնչին փոքրամասնությունն են կազմում: Յես կարծում եմ, վոր պատվիրակությունն իր տված հարցում այս տարրերի մասին չե, վոր խոսում եւ իսկ յեթե խոսքը վերաբերում եւ բանվորներին ու գյուղացիների աշխատավորական մասսաներին, ապա յես պետք ե ասեմ, վոր արտաքին առևտրի մոնոպոլիայի վերացման պահանջը նրանց շրջանում կարող եր լոկ քրքիջ ու թշնամական վերաբերմունք առաջացնել:

Իրոք, բանվորների համար ի՞նչ կարող եր նշանակել արտաքին առևտրի մոնոպոլիայի վոչնչացումը: Այս նրանց համար կնշանակեր հրաժարումն յերկիրն ինդուստրացնելուց, նոր գործարաններ ու ֆաբրիկաներ կառուցելուց, հին գործարաններն ու ֆաբրիկաներն ընդլայնելուց: Այս նրանց համար կնշանակեր ԽՍՀՄ-ն հեղեղել կապիտալիստական յերկիրներից յեկող ապրանքներով, կծկել մեր ինդուստրիան նրա համեմատական թուլության շնորհիվ, բազմապատկել գործադրությունների թիվը, վատթարացնել բանվոր գասակարդի նյութական դրությունը, թուլացնել նրա տնտեսական ու քաղաքական դիրքերը: Վերջին հաշվով այս կնշանակեր ուժիղացնել նեպմանին ու առհասարակ նոր բուրժուազիային: ԽՍՀՄ-ի պրոլետարիատը կարմղ և արդյոք այս ինքնասպանությանը զիմնել: Պարզ ե, վոր չի կարող:

Իսկ գյուղացիության աշխատավոր մասսաների համար ի՞նչ կնշանակեր արտաքին առևտրի մոնոպոլիայի վոչնչացումը: Այդ կնշանակեր մեր յերկիրն ինքնուրույն յերկիրց մի կիսադաղութային յերկիր վերածել ու գյուղացիական մասսաներին աղքատացնել: Այդ կնշանակեր դարձ դեպի այն «ապատ առևտրի» ուժիմը, վորը թագավորում եր կոչակի ու Դինիկինի որով, յերբ հականեղափական գեներալների ու «գաշնակիցների» միացյալ ուժերի համար հեշտ եր բաղմածիլիոն գյուղացիությանը թալանելն ու կողոպտելու: Վերջին հաշվով այդ կնշանակեր կուլակների

ու այլ շահագործող տարրերի ուժեղացում գյուղում: Գյուղացիները բավականաչափ ճաշակել են այդ ուժիմի սբանչելիքներն Ուկրաինայում ու Հյուսիսային Կովկասում, Վոլգայի ափերում ու Սիբիրում: Ի՞նչ հիմքեր կան յենթադրելու, վոր նրանք կցւականան նորից այդ ողն իրենց վիզը գցել: Միթե պարզ չե, վոր գյուղացիության աշխատավոր մասաները չեն կարող արտաքին առևտրի մոնոպոլիսայի վոչնչացման կողմնակից լինել:

Պատվիրակներից մեկը: Պատվիրակությունն առաջադրեց արտաքին առևտրի մոնոպոլիսայի վերաբերյալ, նրա վերացման վերաբերյալ կետը վորպես մի կետ, վորի շուրջը կարող կլիներ կազմակերպվել բնակչության մի ամբողջ խումբ, յնթե ԽՍՀՄ-ում մի կուսակցության մոնոպոլիս, լողալության մոնոպոլիս չիներ:

Խտակն: Այսպիսով պատվիրակությունը վերադառնում է կոմունիստական կուսակցության՝ վորպես ԽՍՀՄ-ում միակ լեգալ կուսակցության՝ մոնոպոլիսայի հարցին: Այս հարցի կարճ պատասխանը յես արդեն տվի, յերբ խոսում եյթ բանվորների ու գյուղացիների միջնունակոր մասսաների գեղի կոմունիստական կուսակցությունը տածած համակրանքն ստուգելու ճանապարհների ու յեղանակների մասին: Ինչ վերաբերում է բնակչության մյուս խավերին,—կուլակներին, նեղմաններին, ջախջախված հին շահագործողական դասակարգերի մնացորդներին, — ապա նրանք մեղանում զրկված են իրենց քաղաքական կազմակերպությունն ունենալու իրավունքից՝ ճիշտ այնպես, ինչպես վոր նրանք զըրկված են ընտրական իրավունքներից: Պրոլետարիատը բուրժուազիայից ֆարբիկաներն ու գործարանները, բանկերն ու յերկաթուղիները, հողն ու հանքահորերը չե միայն, վոր խելել ե: Նա բուրժուազիայից խելել ե նաև իր քաղաքական կազմակերպությունն ունենալու իրավունքը, վորովհետեւ պրոլետարիատը բուրժուազիայի իշխանության վերականգնումը չի ցանկանում: Պատվիրակությունն, ըստ յերեսութին, առարկություններ չունի այն բանի գեմ, վոր ԽՍՀՄ-ի պրոլետարիատը բուրժուազիայից ու կալվածատերերից խլել ե ֆարբիկաներն ու գործարանները, հողն ու յերկաթուղիները, բանկերն ու հանքահորերը: (Ծիծաղ): Բայց պատվիրակությունը, ինչպես ինձ թվում ե, վորքը ինչ տարակուսում ե այն առթիվ, վոր պրոլետարիատը դրանով չբավականացավ ու ավելի առաջ գնաց՝ բուրժուազիայից խելով քաղաքական իրավունքները: Աս, ըստիս, այնքան ել տրամաբանական չե կամ, ամենի ճիշտը, բոլորովին տրամաբանական չե: Ի՞նչ

հիման վրա յեն պրոլետարքատից մեծահոգություն պահանջում բուրժուազիայի նկատմամբ: Միթե բուրժուազիան Արևոտաքում, իշխանության զլուս գտնվելով, թեկուղ ամենափոքը մեծահոգություն և ցուցաբերում բանվոր դասակարգի նկատմամբ: Միթե նա ընդհատակ չի քշում բանվոր դասակարգի իսկապես հեղափոխական կուսակցություններին: Ի՞նչ հիման վրա յեն ԽՍՀՄ-ի պրոլետարիատից մեծահոգություն պահանջում գնապէի իր դասակարգային թշնամին: Յեն կարծում եմ, վոր արամաբանությունը պարտավորեցնում ե: Նա, ով մտածում և բուրժուազիային նրա քաղաքական իրավունքները վերազարձնելու հնարավորության մասին, նա պետք ե, յեթե նա ուղում և տրամադառական լինեն ավելի հեռուն գնա և ֆարբիկաներն ու գործարանները, յերկաթուղիներն ու բանկերը բուրժուազիային վերադարձնելու հարցը ևս գնի:

Պատվիրակներից մեկը: Պատվիրակության խնդիրն եր՝ պարզեց, թե ինչ կերպ կարող են իրենց լիդալ արտահայտությունը գտնել բանվոր դասակարգի ու զյուղացիության մեջ յեղած այն կարծիքները, վորոնք տարրեր են կոմկուսակցության կարծիքներից: Սխալ կլիներ բանն այնպես հասկանալ, թե պատվիրակությունը հետաքրքրվում և բուրժուազիային քաղաքական իրավունքներ տալու հարցով, այն հարցով, թե բուրժուազիան ինչպես կարող ե իր կարծիքներն ի հայտ բերելու լիդալ արտահայտությունն գտնել: Խոսքը հենց այն մասին ե, թե ինչ կերպ կարող են իրենց լիդալ արտահայտությունը գտնել բանվոր դասակարգի ու զյուղացիության մեջ յեղած այն կարծիքները, վորոնք տարրեր են կոմկուսակցության կարծիքներից:

Մեկ ուրիշ պատվիրակ: Այդ տարրեր կարծիքները կկարողանային իրենց արտահայտությունը գտնել բանվոր դասակարգի մասսայական կազմակերպություններում, արհմիություններում և այլն:

Ստալին: Շատ լավ: Հետեւքար, խոսքը բուրժուազիայի քաղաքական իրավունքների վերականգնման մասին չե, այլ կարծիքների պայաքարի մասին բանվոր դասակարգի ու զյուղացիության ներսում: Արդյոք ներկայում կարծիքների պայաքար տեղի ունի բանվորների ու զյուղացիության աշխատավոր մասսաների շրջանում: Անպայման տեղի ունի: Չի կարող լինել վոր միլիոնավոր բանվորներն ու զյուղացիները միանման մասման: Այդպիսի բան կյանքում չի լինում: Նախ, բանվորների ու զյուղա-

ցիների միջև մեծ տարբերություն կա թէ նրանց տնտեսական դրության իմաստով, թէ այս կամ այն հարցերի վերաբերյալ նրանց հայացքների իմաստով: Յերկրորդ, հայացքներում վրոշ տարբերություններ գոյություն ունեն բանվոր գասակարգի մեջ ել—գաստիարակության տարբերություն, հասակների, խառնվածքի տարբերություն, տարբերություն բնիկ բանվորների ու գյուղից յեկած բանվորների միջև և այլն: Այս ամենը տանում ե դեպի կարծիքների պայքար բանվորների ու գյուղացիության աշխատավոր մասսաների մեջ, վորն իր լեգալ արտահայտությունն ստանում և ժողովներում, արհմիություններում, կոոպերացիայում, խորհուրդների ընտրությունների ժամանակ և այլն:

Բայց այժմ, պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, տեղի ունեցող կարծիքների պայքարի ու անցյալում, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, տեղի ունեցած կարծիքների պայքարի միջև արմատական տարբերություն գոյություն ունի: Այն ժամանակ, անցյալում, կարծիքների պայքարը բանվորների ու աշխատավոր գյուղացիների շրջանում՝ կենտրոնանում եր գլխավորապես կարմածատերներին, ցարիզմը, բուրժուազիային տապալելու հարցերի վրա, բուրժուական կարգերը ջարդելու վրա: Հիմա, պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, կարծիքների պայքարն ընթանում է վհչ թէ խորհրդային իշխանությունը տապալելու, խորհրդային կարգերը ջարդելու հարցերի շուրջը, այլ խորհրդային իշխանության որգանները բարելավելու, նրանց աշխատանքը բարելավելու հարցերի շուրջը: Այսեղ արմատական տարբերություն կա: Զարմանալի վոչինչ չկա այն բանում, վոր գոյություն ունեցող կարգերը հեղափոխականորեն ջարդելու հարցը շուրջը յեղած կարծիքների պայքարն անցյալում հիմք եր տալիս, վորպեսզի բանվոր գասակարգի ու գյուղացիության աշխատավորական մասսաների ներսում յերկան գան միմյանց զեմ մրցող միքանի կուսակցություններ: Այդ կուսակցություններն ելին՝ բոլշևիկների կուսակցությունը, մենշևիկների կուսակցությունը, ես-երների կուսակցությունը: Մյուս կողմից, բնավ գրժավար չե հասկանալ նաև այն, վոր կարծիքների պայքարն այժմ, պրոլետարիատի դիկտատուրայի որպէս պայքար, վորի նալատակն ե գոյություն ունեցող խորհրդային կարգերի վհչ թէ ջարդումը, այլ նրանց բարելավումն ու ամրապնդումը, բանվորների ու գյուղի աշխատավորական մասսաների շրջանում միքանի կուսակցությունների գոյության համար սնունդ չի առիմ: Ահա թէ ինչու

միայն մի կուսակցության, կոմունիստների կուսակցության լինգալությունը, այդ կուսակցության մոնոպոլիան վհչ միայն առարկություններ չի առաջացնում բանվորների ու աշխատավոր գյուղացիների շրջանում, այլ ընդհակառակն, ընդունվում և վորպես ինչ-վոր անհրաժեշտ ու ցանկալի մի բան:

Մեր կուսակցության՝ վորպես յերկրում միակ լիդար կուսակցության՝ դրությունը (կոմկուսակցության մոնոպոլիա) արհետական և միտումով հնարիված վորեն բան չե: Այսպիսի դրությունը չի կարող ստեղծվել արհետականորեն, փարչական մեքնայությունների և այլնի միջոցով: Մեր կուսակցության մոնոպոլիան կյանքից և աճել պատմականորեն կազմավորվել վորպես արդյունք այն բանի, վոր ես-երների ու մենջեիկների կուսակցությունները մեր իրականության պայմաններում վերջնականապես սնանկացան ու թատերաբեմից հեռացան: Ի՞նչ եյին ես-երների ու մենջեիկների կուսակցություններն անցյալում: Պրոլետարիատի նկատմամբ բուրժուական ազգեցություն հաղորդողների, ինչնվարդ եր սնվում ու պահպանվում այդ կուսակցությունների գոյությունը մինչև 1917 թվի հոկտեմբերը: Բուրժուաների զասակարգի առկայությամբ, վերջապես բուրժուական իշխանության առկայությամբ: Միթե պարզ չե, վոր բուրժուազիայի տապալմամբ պետք ե անհետանային այդ կուսակցությունների գոյության հիմքերը: Իսկ թնչ դարձան այդ կուսակցությունները 1917 թվի հոկտեմբերից հետո: Երանք դարձան կապիտալիզմի վերականգնման ու պրոլետարիատի իշխանության տապալման կուսակցությունների: Միթե պարզ չե, վոր այդ կուսակցությունները պետք ե ամեն մի հող ու ամեն մի ազգեցություն կորցնելին բանվորական մասսաների ու գյուղացիության աշխատավորական շերտերի մեջ:

Բանվոր դասակարգի վրա ազգեցություն ունենալու համար կոմունիստների կուսակցության և ես-երների ու մենջեիկների կուսակցությունների միջև մղվող պայքարը յերեկվանից չի սկավել: Նրա սկիզբը համարում են մասսայական հեղափոխական շարժման առաջին նշանների մոմենտը Ռուսաստանում, դեռևս 1905 թվից առաջ: 1903 թ. մինչև 1917 թվի հոկտեմբերը յեղած ժամանակաշրջանը մեր յերկրի բանվոր դասակարգի մեջ կարծիքների կուտազի պայքարի ժամանակաշրջան ե, բոլեհիկների, մենցեիկների ու ես-երների միջև բանվոր դասակարգի մեջ ունենալիք ազգեցության համար մղվող պայքարի ժամանակաշրջան:

Այդ ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը յերեք հեղափոխության բովով անցավ։ Նա այդ հեղափոխությունների կրակի մեջ եր փորձում ու ստուգում այդ կուսակցություններին, նրանց պիտանիությունը պրոլետարական հեղափոխության գործի համար, նրանց պրոլետարական հեղափոխականությունը։ Յեղանակ, 1917 թվի հոկտեմբերյան որերին, յերբ պատմությունն ամփոփեց անցյալ ամբողջ հեղափոխական կազմի արդյունքները, յերբ պատմությունն իր կշնորհով կշռեց բանվոր դասակարգի ներսում կավող կուսակցությունների տեսակաբար կշիռը, — ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը, վերջապես, կատարեց վերջնական ընտրությունը՝ կանգ տառնելով կոմունիստական կուսակցության՝ վորագիս միակ պրոլետարական կուսակցության՝ վրա։ Ինչով բացարձի այն փաստը, վոր բանվոր դասակարգի ընտրությունը կանգ տառավ կոմունիստական կուսակցության վրա։ Միթե սա փաստ չե, վոր բոլեկիկները լենինյանների խորհրդում, որինակ, 1917 թվի ապրիլին, աննշան փոքրամասնություն եյին։ Միթե սա փաստ չե, վոր ես-երներն ու մենչեկիկներն այն ժամանակ խորհրդական հսկայական մեծամասնություն ունեցին։ Միթե սա փաստ չե, վոր մինչհոկտեմբերյան որերին իշխանության ամբողջ ապարատն ու հարկադրման բոլոր միջոցները գտնընդում եյին ես-երների ու մենչեկիկների կուսակցությունների ձեռքում, վորոնք բարկ եյին կազմել բուրժուազիայի հետ։ Սա բացատրվում է նրանով, վոր կոմկուսակցությունն այն ժամանակ պատեհականի լիկիդացիայի, անհապաղ գեմոկրատական հաշտության կողմնակից եր, մինչդեռ ես-երների ու մենչեկիկների կուսակցությունները պաշտպանում եյին «պատեհազմը մինչի հաղթական վախճան»։ Իմպերիալիստական պատեհազմի շարունակումը։ Սա բացատրվում է նրանով, վոր կոմկուսակցությունն այն ժամանակ կերենսկու կառավարության տապալման, բուրժուական իշխանության տապալման, ֆարբիկաների ու գործարանների, բանկերի ու յերկաթուղիների ազգայնացման կողմնակից եր, մինչդեռ մենշևիկների ու ես-երների կուսակցությունները կովում եյին հանուն կերենսկու կառավարության ու պաշտպանում եյին բուրժուագիայի իրավունքները ֆարբիկաների ու գործարանների վերաբերմամբ, բանկերի ու յերկաթուղիների վերաբերմամբ։ Սա բացատրվում է նրանով, վոր կոմունիստների կուսակցությունն այն ժամանակ կողմնակից եր կալվածատիրական հողերի անհապաղ բոնագրավման հոգուտ գյուղացիների, մինչդեռ ես-երների

ու մենչելիների կուսակցություններն այդ հարցը հետաձգում ելին մինչև Սահմանադիր ժողովը, վորի գումարումը, իր հերթին, հետաձգում ելին անորոշ ժամանակով։ Ել ի՞նչ զարմանալու բան կա այսուղի, յեթե բանվորներն ու գյուղացիական չքավորությունը վերջապես ընտրություն կատարեցին հոգուտ կոմունիստական կուսակցության։ Ել ի՞նչ զարմանալու բան կա այսուղի, յեթե ես-երների ու մենշևիկների կուսակցություններն այնպես արագ կերպով դեպի հասակն իջան։ Ահա թե ինչն է պատճառը, վոր իշխանության գլուխ կոմունիստական կուսակցությունն անցավ։

Հետագա ժամանակաշրջանը, 1917 թվի հետհոկտեմբերյան ժամանակաշրջանը, քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանը մենշևիկների ու ես-երների վերջնական կործանման ժամանակաշրջանն եր, բոլշևիկների կուսակցության վերջնական հաղթանակի ժամանակաշրջանը։ Մենշևիկներն ու ես-երներն իրենք հետացըրին այդ ժամանակաշրջանում կոմկուսակցության հաղթանակը։ Մենշևիկյան ու ես-երական կուսակցությունների բեկորները Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակ ջախջախված ու հատակ իջեցված լինելով՝ սկսեցին կապվել կուլակների հականեղափոխական ազստամբությունների հետ, բլոկ կազմեցին կոլչակյանների ու դենիկինյանների հետ, ծառայելու դնացին Միտանտի մոտ և բանվորների ու գյուղացիների աչքում վերջնականապես թաղեցին իրենց։ Այնպիսի պատկեր ստեղծվեց, վոր ես-երներն ու մենշևիկները, վորոնք բուրժուական հեղափոխական հականեղափոխականների ելին վերածվել, ողնում ելին։ Անտանախն խեղդելու նոր, խորհրդացին Ռուսաստանը, մինչդեռ բոլշևիկների կուսակցությունը, իր շորջը միավորելով այն ամենը, ինչ կինդանի յեր ու հեղափոխական, բանվորների ու գյուղացիների ամելի ու ավելի նոր ջոկատներ եր վոտքի հանում պայքարելու հանուն սոցիալիստական հայրենիքի, պայքարիկու ընդդեմ Անտանախի։ Միանդամայն բնական է, վոր կոմունիստների հաղթությունն այս ժամանակաշրջանում պետք ե հասցներ ու իրոք հասցըց ես-երների ու մենշևիկների լիակատար պարտությանը։ Ել ի՞նչ զարմանալու բան կա այսուղի, յեթե այս ամենից հետո կոմկուսակցությունը դարձավ բանվոր դասակարգի ու գյուղացիական չքաղաքության միակ կուսակցությունը։

Ահա թե ինչպես կազմավորվեց մեղանում կոմկուսակցությունը։

ՅՅան՝ վորպիս յերկրի միակ լեդաւ կուսակցության՝ մոնոպուլիան:

Դուք խոսուամ եք բանվորների ու դյուզացիների շրջանում տեղի ունեցող կարծիքների պայքարի մասին այժմ, պրոլետարական դիկտատուրայի պայմաններում: Յես արգեն ասացի, վոր կարծիքների պայքար կա և կլինի, վոր առանց դրան անհնարին և առաջ շարժվելը: Բայց կարծիքների պայքարը բանվորների շրջանում այժմյան պայմաններում ընթանում և վնչ թե խորհրդային կարգերի տապալման վերաբերյալ սկզբունքային հարցերի շուրջը, այլ խորհրդային բշխանության ամրացման շուրջը: Միանդամայն հասկանալի յե, վոր կարծիքների այդպիսի պայքարը կարող և միայն ամրապնդել ու կատարելագործել կոմունիստական կուսակցությանը: Միանդամայն հասկանալի յե, վոր կարծիքների այդպիսի պայքարը կարող և միայն ամրապնդել կոմուսակցության մոնոպոլիան: Միանդամայն հասկանալի յե, վոր կարծիքների այդպիսի պայքարը չի կարող սնունդ տալ, վոր պեսզի ուրիշ կուսակցություններ կազմավորվեն բանվոր դասակարգի ու աշխատավորական գյուղացիության ընդերքում:

5-րդ ՀԱՐՑ: Արդյոք դուք կարո՞ղ եք համառոտակի հաղորդիլ մեզ ձեր և Տրակու միջն յեղած հիմնական տարակարծությանը:

ՊԱՏՍՈՒԱԾՈՒՆ: Ամենից առաջ յես պետք է ասեմ, վոր Տրոցկու հետ ունեցած տարակարծություններն անձնական տարակարծություններ չեն: Յեթե տարակարծություններն անձնական քնույթ կրեյին, կուսակցությունը վոչ մի ժամ չեր զբաղվի այդ գործով, վորովհետեւ նա չի սիրում, վոր առանձին անձեր ցայտագրվեն (ԵՎԱԿԱՎԱԼԻԵ): Ակներեւ և, վոր խոսքը վերաբերում է կուսակցության մեջ յեղող տարածայնություններին: Յես այսպես հասկացա այդ հարցը: Այս, այդ տարածայնությունները դոյցություն ունեն կուսակցության մեջ: Այդ տարածայնությունների բնույթի մասին մոտ ժամանակներս բավական մանրամասն պատմեցին իրենց զեկուցումներում ընկ. Ռիկովը—Մոսկացում, ընկ. Բուխարինը—Լենինդրագում: Այդ զեկուցումները հրապարակված են: Այն ամենին, ինչ ասված է այդ զեկուցումներում տարածայնությունների մասին, յես վոչինչ չունեմ ավել-

լացնելու: Յեթև դուք այդ դոկումենտները չունեք, յես կարող եմ ձարել դրանք ձեզ համար: (Պատվիրակությունը հաղորդում է, վոր ինքն ունի այդ դոկումենտները):

Պատվիրակներից մեկը: Մեր վերադարձին մեղ կհարցնեն այդ տարածայնությունների մասին, բայց մենք չունենք բոլոր դուկումենտները: Որինակ, մենք չունենք «83»-ի պլատֆորմը:

Ստալին: Յես այդ պլատֆորմը չեմ ստորագրել: Յես իրավունք չունեմ անորինություն անելու ուրիշների դոկումենտների նկատմամբ: (Նիծաղ):

Ե-րդ ՀԱ.ԲՅ: Կապիտալիստական յերկիրներում արտադրության զարգացման հիմնական մղումը հիմնված է օտանույր հարելու հույսի վրա: Այդ մղումը, հիմարկե, հարաբերաբար, բացակայում է ԽՍՀՄ-ում: Ի՞նչն է փոխարինում դրան, և այդ փոխարինումը, ձեր կարծիքով, վո՞րեան եֆեկտավոր է: Արդյոք նա կարո՞ղ է մնայում ինքնի:

ՊԱ.ՏԱ.ՍԼԵ.ԱՅ: Այդ ձիշտ ե, վոր կապիտալիստական անաեւության հիմնական շարժիչը շահույթը քաղելն ե: Ձիշտ և նույնապես և այն, վոր շահույթը քաղելը մեր սոցիալիստական արդյունաբերության վհչ նոպատակն է հանգիստանում, վհչ ել շարժիչը: Առաջ այդպիսի դեպքում ինչն ե մեր ինդուստրիալի շարժիչը հանդիսանում:

Ամենից առաջ այն հանգամանքը, վոր ֆաբրիկաներն ու գործարանները մեղանում պատկանում են ամբողջ ժողովրդին և վոչ թե կապիտալիստներին, վոր ֆաբրիկաներն ու գործարանները կառավարում են վոչ թե կապիտալիստների կամակատարները, այլ բանվոր զտակարգի ներկայացուցիչները: Այս բանի գիտակցությունը, վոր բանվորներն աշխատում են վոչ թե կապիտալիստի համար, այլ իրենց սեփական պետության համար, իրենց սեփական զատակարգի համար,— այս գիտակցությունը հսկայական շարժիչ ուժ է հանդիսանում մեր արդյունաբերության զարգացման ու կատարելագործման գործում: Հարկավոր և նշել վոր ֆաբրիկաների ու գործարանների դիրեկտորների հըսկայական մեծամասնությունը մեղանում բանվորներն են, վորոնց նշանակում և ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը՝ համաձայնեցնելով արհմիությունների հետ, ըսդուռում դիրեկտորներից վոչ մեկը չի կարող իր պատում մասն վորների կամ համապատասխան արհմիությունների կամքին հակառակ: Այսուհետեւ հարկ և նշել վոր յուրաքանչյուր գործարանում կամ ֆաբրիկա-

յին կոմիտեն, վորին բանվորներն են ընտրում, և վորը վերահսկողության և յենթարկում ձեռնարկության աղմինխստրացիայի գործունեյությունը: Հարկ ե, վերջապես, նշել վոր յուրաքանչյուր արդյունաբերական ձեռնարկության մեջ կան բանվորների արտադրական խորհրդակցություններ, ուր մտնում են տվյալ ձեռնարկության բոլոր բանվորները, և վորտեղ բանվորներն ստուգում են ձեռնարկության դիրեկտորի ամբողջ աշխատանքը, քննարկում են գործարանի աղմինխստրացիայի աշխատանքի պլանը, նշում են սխալներն ու թերությունները և հնարավորություն ունեն այդ թերություններն ուղղելու արհմիությունների միջոցով, կուսակցության միջոցով, խորհրդային իշխանության որդանների միջոցով: Դժվար չե հասկանալ, վոր բոլոր այս հանգամանքներն արմատապես փոխում են ինչպես բանվորների դրությունը, այնպես ել կարդ ու կանոնը ձեռնարկության մեջ: Յեթե կապիտալիզմի որով բանվորը ֆաքրիկան դիտում և վորպես բանտ, ապա խորհրդային կարգերում բանվորը ֆաքրիկային նայում և արդեն վճար չե վորպես բանտի, այլ վորպես իր համար մոտիկ ու հարազատ մի բանի, վորի դարպացմանը ու բարերավմանը նա կենսականորեն շահագրգուված է: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր բանվորների այս նոր վերաբերմունքը գեպի ձեռնարկությունը, բանվորների այս մոտիկության զգացմունքը գեպի ձեռնարկությունը, մեր ամբողջ արդյունաբերության մեծագույն շարժիչն է: Այս հանգամանքով պետք և բացատրել այն փաստը, վոր որեցոր անում և արտադրության տեխնիկայի բնագավառի՝ այն գյուտարարների ու արդյունաբերության կազմակերպիչների քանակը, վորոնք դուրս են գալիս բանվորների միջից:

Յերկրորդ՝ այն հանգամանքը, վոր արդյունաբերությունից ստացվող յեկամուտները մեղանում գնում են վճար առանձին անհատների հարստացման, այլ արդյունաբերության հետագա ընդլայնման համար, բանվոր գասակարգի նյութական ու կուլտուրական զրության բարեկավման համար, ինչպես բանվորներին, այնպես ել գյուղացիներին անհրաժեշտ արդյունաբերական ապրանքների եժանացման, այսինքն գարճյալ աշխատավոր մասսաների նյութական զրության բարեկավման համար: Կապիտալիստը չի կարող իր յեկամուտները հատկացնել բանվոր գասակարգի բարեկեցության բարձրացմանը: Նա շահույթների համար և ապրում, Այլապես նա կապիտալիստ չեր լինի: Նա շահույթներ և

քաղում, վորպեսզի դբանք գումարի-դարձնի ավելադիր կապիտալ և արտահանի ավելի նվազ զարգացած յերկիրները, վորոնք տառապում են կապիտալների պակասություննից, նոր, ել ավելի խոշոր շահություներ քաղելու նպատակով: Այսպես կապիտալները չյուսիսային Ամերիկայից հոսում են Չինասահան, Ինդոնեզիա, Հարավային Ամերիկա, Յելլուպա, Ֆրանսիայից — Փրանսական գաղություները, Անգլիայից — անգլիական գաղություները: Մեղանում բանն այլ ե, վորովիետ մենք գաղություն քաղաքականություն չենք վարում ու այդպիսին չենք ընդունում: Մեղանում արդյունաբերությունից ստացվող յեկամուտները մնում են յերկրում՝ ինդուստրիայի հետագա ընդլայնման գործի համար, բանվորների գրության բարեկավման գործի համար, արդյունաբերական ապրանքների հժանացման միջոցով ներքին շուկայի, այդ թվում գյուղացիական շուկայի տարրությունը բարձրացնելու գործի համար: Արդյունաբերությունից ստացվող շահությունների 10 տոկ. մեղանում գործադրվում ե բանվոր գասակարգի կենցաղի բարեկավման վրա: Բանվորների գրամական աշխատավարձի 13 տոկոսը մեղանում գործադրվում ե բանվոր գասակարգին պետության հաշվին ապահովագրելու վրա (գա տարեկան 800 միլիոն սուրլուց ավելի յե կազմում): Յեկամուտների վորոշ մասը (յես հիմա չեմ կարող ասել — հատկապես վոր մասը) գործադրվում ե կուլտուրական կարիքների, ֆաբրիկա-գործարաններին աշակերտության ու բանվորների արձակուրդների վրա: Այդ յեկամուտների բավական նշանակալի մասը (յես հիմա դարձյալ չեմ կարող ասել — հատկապես վոր մասը) գործադրվում ե բանվորների գրամական աշխատավարձի ամենամյա բարձրացման վրա: Արդյունաբերությունից ստացվող յեկամուտների մնացած մասը ծախսվում ե արդյունաբերության հետագա ընդլայնման վրա, հին գործարանների նորողման վրա, նոր գործարանների կառուցման վրա, վերջապես, արդյունաբերական ապրանքների եփանացման վրա: Այս հանդամանքների հակայական նշանակությունը մեր ամբողջ արդյունաբերության համար այն ե, վորա) նրանք հեշտացնում են գյուղատնտեսության մերձեցումն ինդուստրիայի հետ և քաղաքի ու գյուղի միջև յեղած հակադրությունների հարթումը: բ) նրանք նպաստում են ներքին — քաղաքային ու գյուղական — շուկայի տարրության աճմանը՝ հենց դրանով ել անընդհատ աճող բազա սանդելով ինդուստրիայի հետագա ծավալման համար:

Վերջապես՝ այն հանգամանքը, վոր արդյունաբերության աղդայնացման փաստը հեշտացնում է ի մի առած ամբողջ արդյունաբերական տնտեսության պլանային վարումը:

Մեր արդյունաբերության այս աղդակներն ու շարժիչները մշտական գործոններ կլինեն արդյոք: Արդյոք նրանք կարող են մշտապես գործող ֆակտորներ լինել: Այս, նրանք անպայման կլինեն մշտապես գործող աղդակներ ու շարժիչներ: Յեվ վորքան ավելի զարգանա մեր ինդուստրիան, այնքան ավելի յեն աճելու այդ գործոնների ուժն ու նշանակությունը:

7-րդ ՀԱԲՅ: ԽՍՀՄ-ն ի՞նչ չափով կարող է համագործակցել այլ յերկիրեների կապիտալիստական արդյունաբերության հետ: Կա՞ արգյուք վորու սահման այդպիսի համագործակցության համար, թե՞ դա սովոր մի փորձ ե՞ւ պարզելու համար, թե վո՞ր մասում ին՛չ-պիսի համագործակցություն է հնարավոր և վո՞ր մասում վոչ:

ՊԱՏԵՍԽԱԽԱՆ: Խոսքը, յերեխ, վերաբերում է կապիտալիստական պետությունների հետ արդյունաբերության բնագավառում, առևտորի բնագավառում և, գուցե, դիվանագիտական հարաբերությունների կնքելուն: Յես կարծում եմ, վոր յերկու հակադիր սիստեմների — կապիտալիստական սիստեմի ու սոցիալիստական սիստեմի — առկայությունը չի բացառում այդպիսի համաձայնությունների հնարավորությունը: Յես կարծում եմ, վոր այդպիսի համաձայնությունները հնարավոր ու նպատակահարմար են խաղաղ զարգացման պայմաններում: Արտահանությունն ու ներմուծումն ամենահարմար հողն են այդպիսի համաձայնությունների համար: Մեզ հարկավոր են՝ սարքավորում, հումք (որինակ՝ բամբակ), կիսաֆարբերիատներ (մետաղի և այլն), իսկ կապիտալիստներն այդ ապրանքների վաճառահանումը և արդյունաբերության համար: Ահա ձեզ համաձայնության հող: Կապիտալիստներին հարկավոր են՝ նազմի, վայսեղին, հացամթերքներ, իսկ մեզ անհրաժեշտ է վաճառահանների այդ ապրանքները: Ահա ձեզ համաձայնության համար դարձյալ մի հող: Մեզ վարեկեր են հարկավոր, կապիտալիստներին հարկավոր են լավ տակոսներ այդ վարկերի համար: Ահա ձեզ ելի մեկ հող համաձայնության համար՝ արդեն վարկի գծով, ընդունուած հայտնի յե, վոր խորհրդային որդանները վարեկերի վերաբերմամբ ամենաճշտապահ վճարողներն են:

Նույն այդ բանը կարելի յե ասել դիվանագիտական բնագա-

վառի մասին: Մենք խաղաղության քաղաքականությունն ենք վարում և մենք պատրաստ ենք փոխազարձ չհարձակման պակտեր ստորագրելու բուրժուական պետությունների հետ: Մենք խաղաղության քաղաքականությունն ենք վարում և մենք պատրաստ ենք դիմութափման վերաբերյալ համաձայնության դիմելու՝ ընդհուպ մինչև մշտական բանակների լիակատար վոչչացումը, վորի մասին մենք ամբողջ աշխարհի առաջ հայտարարել ենք դեռև ձեռովայրի կոնֆերենցիայում: Ահա ձեզ հող դիմանագիտական գծով համաձայնության համար:

Այդ համաձայնությունների սահմանները դըրվում են յերկու սխառեմների հակադրությամբ, — սխառեմներ, վորաց միջև աեղի յև ունենում մրցակցություն, պայքար: Այն ըըջանակներում, վոր այդ յերկու սխառեմներն են թույլ տալիս, բայց միայն այդ ըըջանակներում, համաձայնությունները լիովին հնարավոր են: Այդ մասին և խոսում Գերմանիայի, Իտալիայի, Ճապոնիայի և այլոց հետ կնքած համաձայնությունների փորձը:

Սրգյոք այդ համաձայնությունները սոսկ եքսպերիմենտ են, թե Նրանք կարող են ունենալ ավելի կամ պակաս յերկարատեք ընույթի: Դա կախված է վոչ միայն մեղանից, դա կախված է նույնպես մեր կոնտրահենսուներից: Դա կախված է ընդհանուր իրազրությունից: Պատերազմը կարող է գլխիվայր շուրջ տալ բոլոր ու ամեն տեսակի համաձայնությունները: Դա կախված է, վերջապես, համաձայնության պայմաններից: Սարկական պայմաններ մենք չենք կարող ընդունել: Մենք համաձայնություն ունենք Հարրիմանի հետ, վորը շահագործում է մանգանի հանքերը վրաստանում: Համաձայնությունը կնքված է 20 տարով: Ինչպես տեսնում եք, բոլորովին ել փոքր ժամանակ չեն: Մենք համաձայնություն ունենք նույնպես կենաց Գոլդֆիլդ ընկերության հետ, վորը փոսկի յե արդյունահանում Սերիբում: Համաձայնությունը կնքված է 30 տարով, — ել ավելի յերկարատեք մի ժամկետով: Վերջապես, համաձայնություն կա ճապոնիայի հետ՝ Սախալինում նավթաղբյուրներ ու ածխահանքեր շահագործելու վերաբերյալ:

Մենք կցանկանայինք, վոր այս համաձայնություններն ունենան քիչ թե շատ հաստատուն բնույթի: Բայց այդ կախված է, ինարկե, վնչ միայն մեղանից, այլև մեր կոնտրահենսուներից:

Տ-րդ ՀԱՐՑ: Վարո՞ն են Ռօւսաստանի հիմնական տարբերությունները կապիտալիստական պետություններից այն հաղաքականու-

քյան մեջ, վոր նու փարում և ազգային փսխամանությունների նկատմամբ:

**ԱԱՏԱՍԽԱՆՈՒ:** Խոսքը, յերեխ, վերաբերում և ԽՍՀՄ-ի այն ազգություններին, վորոնց առաջնակում ցաբիզին ու ուժուական շահագործող դասակարգերը կեղեքում եյին, և վորոնք չունեցին իրենց պետականությունը: Հիմնական տարրերությունն այն է, վոր կապիտալիստական պետություններում գոյություն ունենազգային ձնշում ու ազգային ստրկացում, իսկ մեղանում, ԽՍՀՄ-ում, արմատապես վոչնչացված են թե մեկը, թե մյուսը: Ենտեղ, կապիտալիստական պետություններում, առաջին կարգի ազգերի, արտօնյալ ազգերի, «պետական» ազգերի կողքին գոյություն ունեն յերկրորդ կարգի ազգեր, «վոչ-պետական» ազգեր, վոչ-իրապահ ազգեր, վորոնք զրկված են այս կամ այն իրավունքներից և, ամենից առաջ, պետական իրավունքներից: Մեզանում, ԽՍՀՄ-ում, ընդհակառակը, վոչնչացված են ազգային անհավասարության և պղային ձնշման բոլոր այդ ատրիբուտները: Մեզանում բոլոր ազգերն իրավահավասար են ու սուվերեն, վորովճետե առաջներում տիրապետող վելլիկուուս ազգի ազգային ու պետական արագնությունները վոչնչացված են: Բանս, իհարկե, չի վերաբերում ազգությունների հավասարության վերաբերյալ գեկլարացիաներին: Ազգային հավասարության վերաբերյալ գեկլարացիաներ քիչ չունեն ամեն տեսակի բուրժուական ու սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները: Ի՞նչ արժեք ունեն գեկլարացիաները, յեթև նրանք չեն կիրառվում կյանքում: Բանն այն է, վոր վոչնչացնենք այն դասակարգերը, վորոնք ազգային ձնշման կրողները, սաեղծիչներն ու կիրառողներն են: Այդպիսի դասակարգեր եյին մեզ մոտ կարվածաերերը, կապիտալիստաները: Մենք տապալեցինք այդ դասակարգերին և հենց գրանով վոչնչացը ինք ազգային ձնշման հնաբավորությունը: Յեկ հենց այն պատճառով, վոր մենք տապալեցինք այդ դասակարգերին, իսկական ազգային հավասարությունը մեզ մոտ հնաբավոր զարձավի: Հենց այս է, վոր մեղանում կոչվում և ազգությունների ինքնորոշման գաղափարի իրականացումն ընդհուպ մինչև անջատումը: Հենց այն պատճառով, վոր մենք իրականացրել ենք ազգությունների ինքնորոշումը, հենց այդ պատճառով եկ մեզ հաջողվեց զուրս վանել ԽՍՀՄ-ի տարրեր ազգությունների աշխատավոր մասսաների փոխադարձ անվաստահությունը, և ազգությունները կամավորության հիմունքներով միավորել վորակես մի միութենական պետություն:

Ներկայումս գոյություն ունեցող Խորհրդային Սոցիալֆուտական  
 Հանրապետությունների Միությունը մեր ազգային քաղաքական  
 ուժյան արդյունքն եւ այն բանի արտահայտությունը, վոր  
 ԽՍՀՄ-ի ազգությունները հոժարակամ կերպով ֆեռկրացիս յեն  
 կաղմել վորակս մի միութենական պետություն: Հազիվ թե հարե  
 կա ապացուցելու, վոր այսպիսի քաղաքականությունն աղջային  
 հարցում աներեակայելի յե կապիտալիստական յերկիրներում,  
 վորովհետեւ այնաև գենես իշխանության գլուխ են կանդնած  
 կապիտալիստները, վորոնք ազգային ձնջման քաղաքականության  
 ստեղծիչներն ու կիրառողներն են: Զի կարելի չնշել, որինակ,  
 այն փաստը, վոր ԽՍՀՄ-ի բարձրագույն որդանի, — Խորհուրդ  
 ների կենտրոնական գործադիր կոմիտեի, — գլուխ ե կանդնած  
 վոչ թե պարտավորապես ոռւս նախագահ, այլ վեց նախագահներ՝  
 ԽՍՀՄ-ի մեջ միավորված վեց միութենական հանրապետությունների թվի համաձայն, վորոնցից մեկը ոռւս և (Կալինին), մյուսը  
 ուկրաինացի (Պետրովսկի), յերբորդը — բելուսուս (Զերյաշկով)՝  
 չորրորդը — ազգբեջանցի (Մուսաբեկով), հինգերորդը — թուրք  
 մեն (Այթակով), վեցերորդը — ուզբեկ (Ֆայզուլլա Խոջայիվ):  
 Այս փաստը մեր ազգային քաղաքականության պայծառ արտա  
 հայտություններից մեկն ե: Ինչ ասել կուզի, վոր վոչ մի բուրժու  
 ական հանրապետություն, թեկուղ նա / ամենաղեմուկատականը  
 լինի, այսպիսի քայլի չեր զիմի: Մինչդեռ այս քայլը մեզ համար  
 ինքնին հասկանալի մի փաստ ե, վորը բղխում ե աղջային հա-  
 վասարության մեր ամբողջ քաղաքականությունից:

**9-րդ ՀԱՐՅ:** Ամերիկան բանվորական առաջնարդներն իրենց  
 պայքարը կոմունիստների դեմ արդարացնում են յերկու հանգամանքով:  
 1) կոմունիստները բայխում են բանվորական շարժումը իրենց  
 դրակիցին պայքարով՝ միուրյունների ներսում և իրենց նարձակում-  
 ներայ վոչ-ռադիկալ պատճենատար անձերի վրա՝ արհմիուրյուններում.  
 2) ամերիկյան կոմունիստները կարգություններն սահման են  
 Մոսկվայից և այս պատճառով չեն կարող արհմիուրենական լավ  
 զուծիչներ լինել, վարչափոխ վոր Երանց լոյալությունը ուստե՛քիցա  
 կազմակերպության նկատմամբ զերպանցում և իրենց միուրյան  
 նկատմամբ ունեցած Երանց լոյալությունից: Այս դժվարությունն  
 ի՞նչպես կարող է վերացվել, վարպեսի ամերիկյան կոմունիստները  
 կարողանալու միասնական ամերիկյան բանվորա-  
 կան շարժման մյաս բջիջների հետ:

ՊԵՏՈՒԹԵԱՆ: Յես կարծում եմ, վոր ամերիկյան բանվորական լիդերների այն փորձը, վոր նրանք անում են կոմունիստների գեմ մղած իրենց պայքարն արդարացներու համար, վոչ մի քննադատության չի դիմանում: Դեռ վոչ վոք չի ապացուցել ու չի ապացուցի, վոր կոմունիստները քայլայում են բանվորական շարժումը: Բայց զրա փոխարեն հարկավոր ե լիովին ապացուցված համարել, վոր կոմունիստները բանվորական շարժման ամենանվիրված ու ամենախիզախ մարտիկներն են ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Ամերիկայում: Միթե սա փաստ չե, վոր բանվորների գործադուլների ու ցուցյերի ժամանակ կոմունիստներն ընթանում են բանվոր դասակարգի առաջին շարքերում՝ իրենց վրա ընդունելով կապիտալիստների առաջին հարվածները, մինչդեռ ու եփորմիստական բանվորական լիդերներն այդ ժամանակ թագնվում են կապիտալիստների հետնարակերում (ու զամանակակից առաջին լիդերների վախկուտությունն ու հետադիմականությունը: Միթե պարզ չե, վոր այդպիսի քննադատությունը կարող ե միայն աշխուժացնել ու ամրացնել բանվորական շարժումը: Ծշմարիտ և, այդպիսի քննադատությունը կործանում է հետազեմ բանվորական լիդերների հեղինակությունը: Ե՛, այստեղ առանձին ինչ բան կա վոր: Բանվորական հետազեմ լիդերները թող պատասխանեն հակաքննադատությամբ, և վոչ թե կոմունիստներին արհմիություններից զուրս վոնդելով: Յես կարծում եմ, վոր Ամերիկայի բանվորական շարժումը յեթե նա ցանկանում է ապրել ու ավելի զարգանալ չի կարող յոլա զնալ առանց կարծիքների ու հոսանքների պայքարի՝ արհմիությունների ներսում: Յես կարծում եմ, վոր արհմիությունների ներսում կարծիքների ու հոսանքների պայքարը, հետազեմ լիդերներին քննադատությունը և այն զնալով ավելի ու ավելի կաճեն, ինչպես ել վոր դիմադրեն դրան ու եփորմիստական բանվորական լիդերները: Իսկ Ամերիկայի բանվոր դասակարգին բացարձակական անհրաժեշտ և կարծիքների այդպիսի պայքարն ու այդպիսի քննադատությունը, վոր պեսզի նա կարողանաւ տարբեր հոսանքների միջև ընտրություն կատարել ու վերջապես ինքնորոշվել վորպես ինքնուրույն կազմակերպված ուժ ամերիկյան հոսարակության ներսում: Ամերիկյան ու եփորմիստական լիդերների գանգատները կոմունիստների գեմ լոկ այն են վկայում, վոր նրանք համոզված չեն իրենց արդարացի լինելուն, իրենց զրությունն ամուր չեն զգում: Հենց

այս պատճառով ե, վոր նրանք քննադատությունից վախենում են ինչպես ժանտախալց: Ուշագրավ ե, վոր ամերիկյան բանվորական լիզերները տարբական գեղուղաժամայի ավելի վճռական հակառակորդներ են, քան շատ բութուաներ հենց նույն Ամերիկայում:

Միանգամայն սխալ ե այն պնդումը, թե ամերիկյան կոմունիստներն աշխատում են «Մուլվայից յեկող կարգադրության համաձայն»: Աշխարհում գուք չեք գտնի այնպիսի կոմունիստներ, վորոնք համաձայնեյին գործել դրսից յեկող «կարգադրությունների համաձայն», իրենց համոզմունքների գեմ, իրենց կամքի գեմ, իրադրության ցուցումների հակառակ: Բայց այդպիսի կոմունիստները, յեթե նրանք նույնիսկ վորեն տեղ գոյություն ունենային, գոռշ անգամ չեյին արժենա: Կոմունիստներն ամենահամարձակ ու խիզախ մարզիկ են, նրանք կոփկ են մղում մի ամբողջ ծով թշնամիների գեմ: Կոմունիստների արժեքն, ի միջի այլոց, հենց այն ե, վոր նրանք կարողանում են իրենց համոզմունքները պաշտպանել: Այս պատճառով տարրինակ և ամերիկյան կոմունիստների մասին խոսել իրեն այնպիսի մարզկանց մասին, վորոնք իրենց համոզմունքները չունեն և ընդունակ են դրուելու միայն դրսից արվող «կարգադրություններով»: Բանգորական լիգերների պնդումի մեջ ճիշտ ե միայն մի բան — հենց այն, վոր ամերիկյան կոմունիստները մտնում են կոմունիստների միջազգային կազմակերպության մեջ և ժամանակ առ ժամանակ խորհրդակցում են այդ կազմակերպության կենտրոնի հետ այս կամ այն հարցերի շուրջը: Բայց այսուել ի՞նչ վատ բան կա: Միթե ամերիկյան բանվորական լիգերները դեմ են միջազգային բանվորական կենտրոն կազմակերպելուն: Ճիշտ ե, նրանք Ամստերդամի կազմի մեջ չեն մտնում: Բայց նրանք այնուեղ չեն մտնում վհաջութեալ այն պատճառով, վոր նրանք միջազգային բանվորական կենտրոնին գեմ են, այլ այն պատճառով, վոր նրանք Ամստերդամը չափազանց ձախ կազմակերպություն են համարում: (Ծիծաղ): Ինչու կապիտալիստները կարող են միջազգային մասշտաբով կազմակերպվել իսկ բանվոր դաստիարակը կամ բանվոր դաստիարակի մի մասը չպետք է ունինան իրենց միջազգային կազմակերպությունը: Պարզ չմը արդյոք, վոր Գրինն ու նրա բարեկամներն Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայից՝ գրպարտում են ամերիկյան կոմունիստներին՝ սորկորեն կրկնելով կապիտալիստների լիգենգաները «Մուլվայից յեկող կարգադրու-

թյունների» մասին: Կան մարդիկ, վորոնք կարծում են, թե կոմունիստական ինտերնացիոնալի անգամները Մոսկվայում բան ու դորձեն շինել միայն այն, վոր նստել են ու դիրսկտիմներ են դրում բոլոր յերկիրների համար: Քանի վոր Կոմինտերնի կազմի մեջ մտնող յերկիրների քանակը 60-ից ավելի յէ, ապա կարող եք պատկերացնել ձեզ՝ Կոմինտերնի անդամների զրությունը, վորոնք չեն քնում, չեն ուտում և միայն բան ու գործերն այն ե, վոր նստել են ու գիշեր-ցերեկ գիրեկտիմներ են զրում այդ յերկիրների համար: (Ծիծաղ): Յեզ ամերիկյան բանվորական լիդերները մտածում են այս զվարճալի լեզենդայով քողարկել իրենց ահը կոմունիստների հանգել ու սքողել այն փաստը, վոր կոմունիստներն Ամերիկայի բանվոր դասակարգի ամենահամարձակ ու ամենանվիրված աշխատողներն են:

Պատվիրակությունը հարցնում ե, թե վ՞ո՞ն և յելքն այսպիսի զրությունից: Յես կարծում եմ, վոր այստեղ մեկ յելք կա. Թույլատրել կարծիքների ու հոսանքների պայքարն Ամերիկայի արհմիությունների ներսում, դեն զցել կոմունիստներին արհմիություններից զուրս նետելու հետադեմ քաղաքականությունը և Ամերիկայի բանվոր դասակարգին հնարավորություն առաջ հոսանքների միջև ազատ ընտրություն անելու, վորովհետեւ Ամերիկայում զետ իրենց Հոկտեմբերյան հեղափոխությունը չի յեղել, և այստեղ բանվորները զեւսու հնարավորություն չեն ունեցել վերջնական ընտրություն անելու տարբեր հոսանքների միջև արհմիություններում:

10-րդ ՀԱՐՑ: Արդյուն ներկայումս դրամ ուղարկվում է Ամերիկա՝ տմերիկյան կոմիկուսակցությանը կամ «Դելլի Ռուրկը» կոմունիստական լրագրին աջակցելու համար: Յերեւ վոչ, տմերիկյան կոմունիստները տարեկան վի՞րեան տնդամավճարներ են մուծում III Ինտերնացիոնալ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Յեթե խոսքը վերաբերում է Ամերիկայի կոմկուսակցության և III ինտերնացիոնալի փոխհարաբերություններին, ապա յես պետք ե ասեմ, վոր Ամերիկայի կոմկուսակցությունը, վորպես Կոմունիստական ինտերնացիոնալի մի մասը, հավանորեն անգամական մուծումներ ե վճարում Կոմինտերնին, այնպես, ինչպես վոր Կոմինտերնը, վորպես միջազգային կոմունիստական շաբժման կենտրոն, պետք ե կարծել, ուժեւը ներածին չափով աջակցություն ե ցույց տալիս Ամերիկայի կոմ-

կուսակցությանը, յերբ այդ անհրաժեշտ և գտնում: Յես կարծում եմ, վոր սրանում զարմանալի ու արտասովոր վոչինչ չկա: Իսկ յեթե խոսքը վերաբերում է Ամերիկայի կոմկուսակցության և ԽՍՀՄ-ի կոմկուսակցության փոխհարաբերություններին, ապա յես պետք ե հայտարարեմ, վոր յես չզիտեմ վոչ մի դեպք, յերբ ամերիկյան կոմկուսակցության ներկայացուցիչներն ողնության համար դիմած լինեն ԽՍՀՄ-ի կոմկուսակցությանը: Դուք կարող եք այս տարրորինակ համարել, բայց սա մի փաստ ե, վորը խոսում ե ամերիկյան կոմունիստների չափազանց մեծ նրբանկատության մասին: Բայց ինչ կիներ, յեթե Ամերիկայի կոմկուսակցությունը ողնության համար դիմեր ԽՍՀՄ-ի կոմկուսակցությանը: Յես կարծում եմ, վոր ԽՍՀՄ-ի կոմկուսակցությունն իր ուժերը ներածի չափ ողնություն ցույց կտար նրան: Իրոք, ինչ արժեք կունենար այն կոմկուսակցությունը, այն ել իշխանության գլուխ կանգնած կոմկուսակցությունը, յեթե նա իր ուժերի ներածի չափ ողնությունը մերժեր կապիտալիզմի Ծիտակ դանվող՝ ուրիշ յերկի կոմկուսակցությանը: Յես կասեյի, վոր այդպիսի կոմկուսակցությունը գոռշ անգամ չեր արժենա: Յենթագրենք, թե ամերիկյան բանվոր դասակարգը, իր բուրժուազիային տապալելով, իշխանության հասավ. յենթագրենք, թե Ամերիկայի բանվոր դասակարգին, վոր հաղթել ե կապիտալիզմի գեմ մղած մեծ պայքարում, նրա ուժերի ներածի չափ նյութական ողնության և դիմում մի այլ յերկի բանվոր դասակարգ, — արդյոք ամերիկյան բանվոր դասակարգը կիարողանմար այդպիսի ողնությունը մերժել: Յես կարծում եմ, վոր նա իրեն խայտառակության կմատներ, յեթե տատանվեր ողնություն ցույց տալու:

11-րդ ՀԱՐՑ: Մենք գիտենք, վոր վորոշ լավ կոմունիստներ այնքան ել համաձայն չեն կոմկուսակցության այն սլամանջին, վոր բայց նոր անդամներն անուսիվածներ լինեն, վորովինեն ներկայումս նետադիմ նոգեռությանուրիշունը նեւված ե: Կոմկուսակցությանը կարող կիմնե՞ր արդյոք ապագայում չեզոք լինել կրնի նկատմամբ, վորն աշտկցելիս լիներ ամբողջությամբ վեցրած բնվանդակ գիտության ու դիմուկայելիս լինեն կոմունիզմին: Դուք կարող կիմնելի՞ք արդյոք ապագայում բայլատերել կուսակցության անդամներին կրնական համոզմունեներ դավանել, յերե այդ համոզմունեներ տարբերաց չլինելին կուսակցական լոյալության հետ:

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Այս հարցում միքանի անճառություն կա: Նախ, յես չդիտեմ այնպիսի «լավ կոմունիստներ», վորոնց մասին այստեղ խոսում ե պատվիրակությունը: Հազիվ թե առհասարակ այլպիսի կոմունիստներ գոյություն ունենան բնության մեջ: Յերկրորդ, յես՝ պիտք ե հայտարարեմ, վոր, ֆորմալ կերպով ասած, մեղանում չկան կուսակցության անդամ ընդունելու այնպիսի պայմաններ, վորոնք կուսակցության անդամության թեկնածություն պարտադիր անսաստվածություն պահանջեին: Կուսակցության մեջ ընդունելու մեր պայմաններն են՝ ընդունել կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, անպայման յենթարկվել կուսակցության ու նրա որդանների վճիռներին, անդամավճարներ տալ, մտնել կուսակցության կազմակերպություններից վորեև մեկի մեջ:

**Պատիկրակներից մեկը:** Յես շատ հաճախ եմ կարգում, վոր կուսակցությունից վտարում են աստծուն հավատալու համար:

**Ստալին:** Յես կարող եմ միայն կը կնել կուսակցության մեջ ընդունելու պայմանների մասին արդեն ասածը: Ուրիշ պայմաններ մենք չունենք:

**Այդ նշանակում** ե արդյոք, վոր կուսակցությունը կրոնի նկատմամբ չեղոք ե: Վաչ, չի նշանակում: Մենք պրոպագանդա յենք մղում ու պրոպագանդա յենք մղելու կրոնական նախապաշտամունքների դեմ: Յերկրի որենագրությունն այնպես ե, վոր ամեն մի քաղաքացի իրավունք ունի դավանելու ցանկացած կրոնը: Դա յուրաքանչյուրի խոզի գործն ե: Հենց այս պատճառվ ե, վոր մենք կիրառել ենք յեկեղեցու բաժանումը պետությունից: Բայց կիրառելով յեկեղեցու բաժանումը պետությունից ու դավանանքի աղատություն հոչակելով՝ մենք դրա հատ մեկանդ յուրաքանչյուր քաղաքացու իրավունք ենք վերապահել համոզելու միջոցով, պրոպագանդայի ու աղիտացիայի միջոցով պայքարելու այս կամ այն կրոնի դեմ, ամեն մի կրոնի դեմ: Կուսակցությունը չի կարող չեղոք լինել կրոնի նկատմամբ և նա հակարունական պրոպագանդա յե մղում բոլոր ու ամեն տեսակ կրոնական նախապաշտամունքների դեմ, վորովհետև նա գիտության և կողմանակից, իսկ կրոնական նախապաշտամունքները գիտության դեմ են գնում, վորովհետև յուրաքանչյուր կրոն գիտությանը հակադիր մի բան ե: Այնպիսի դեպքեր, ինչպես Ամերիկայումն ե, վորտեղ մոտ ժամանակներս դարպինա-

կաններին դատապարտեցին, մեղանում անհնարին են, վոքովա-  
 ծեսեւ կուսակցությունը վարում է գիտությունն ամեն կերպ  
 պաշտպանելու քաղաքականություն: Կուսակցությունը չի կա-  
 րող չնզոք լինել կրոնական նախապաշտամունքների նկատմամբ  
 և նա պրոպագանդա յի մղելու այդ նախապաշտամունքների դեմ,  
 վորովինետև դա շահագործող դասակարգերին աջակցող և այդ  
 դասակարգերի նկատմամբ հնագանդություն քարոզող հետադիմ  
 հոգեւորականության աղղեցությունը խախտելու ճիշտ միջոցնե-  
 րից մեկն եւ: Կուսակցությունը չի կարող չնզոք լինել կրոնական  
 նախապաշտամունքներ կրոների նկատմամբ, աշխատավոր մաս-  
 սանեքի գիտակցությունը թունավորող հետազիմ հոգեւորականու-  
 թյան նկատմամբ: Արդյոք մենք ճնշել ենք հետազիմ հոգեւորա-  
 կանությանը: Այն, ճնշել ենք: Դժբախտությունն այն և միայն,  
 վոր նա գետ լիովին լիկվիդացիայի յենթարկված չեւ: Հակակրո-  
 նական պրոպագանդան այն միջոցն եւ, վորը պետք և մինչև  
 վերջը հասցնի հետազիմական հոգեւորականությանը լիկվիդա-  
 ցիայի յենթարկելու գործը: Լինում են գեղաքեր, վոր կուռակ-  
 ցության անդամներից վոմանք յերեմն խանդառում են հակա-  
 կրոնական պրոպագանդան ամեն կերպ ծագաւիլուն: Յեթե կու-  
 ռակիցության այսպիսի անդամներին վասրում են, ապա այդ շատ  
 լավ եւ, վորովինեան այցպիսի «կոմունիստները» մեր կուսակցու-  
 թյան շարքերում տեղ չունեն:

12-րդ ՀԱՐՅ: Դուք կորո՞ղ եք արդյօք համառուսակի տալ մեզ  
 տպագա այն հասարակուրյան բնուքափիրը, վոր փարձում և տեղ-  
 ծել կամունիզմը:

**ՊԱՏՌՈՒԹՅՈՒՆ:** Կոմունիստական հասարակության ընդհանուր  
 բնութագիրը արված և Մարքսի, Ենդելսի ու Լինինի աշխատու-  
 թյուններում: Յեթե համառուսակի տանք կոմունիստական հա-  
 սարակության անառողմիան, ապա դա կլինի այնպիսի հասարա-  
 կություն, ա) վորտեղ արտադրության գործիքների ու միջոցնե-  
 րի մասնավոր սեփականություն չի լինի, այլ կլինի հասարակա-  
 կան, կոլեկտիվ սեփականություն, բ) վորտեղ չեն լինի դասա-  
 կարգեր ու պետական իշխանություն, այլ կլինեն ինդուստրիայի  
 ու գյուղատնտեսության աշխատավորներ, վորոնք տնտեսապե-  
 կառավարվեն վորպես աշխատավորների աղաւա ասոցիացիա-  
 դ) վորտեղ պլանով կազմակերպված ժողովրդական տնտեսու-

թյունը կխաբսխվի բարձրագույն տեխնիկայի վրա՝ ինչպես ինչպւարիայի ընազավառում, այնպես ել զյուղատնտեսության ընագավառում. դ) վորտեղ քաղաքի ու դյուզի միջն, ինդուստրիայի ու դյուզատնտեսության միջն հակագրություն չի ինի. ե) վորածեղ մթերքները կրաշխվեն ֆրանսական հին կոմունիստների սկզբունքով «յուրաքանչյուրից ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ իր պահանջմունքների». դ) վորտեղ գիտությունն ու արվեստը լիակատար ծագկման հասնելու համաբ բավականաչափ բարենպաստ պայմաններ կվայելին. է) վորտեղ անհատը ազատ լինելով մի կտոր հացի հոգսերից ու «աշխարհի ուժեղներին» հարմարվելու անհրաժեշտությունից՝ իսկապես աղասի կլինի: Յեղ այն և այն: Պարզ ե, վոր մենք դեռ հեռու յենք այսպիսի հասարակությունից:

Ինչ վերաբերում ե կոմունիստական հասարակության լիակատար հաղթանակի համար անհրաժեշտ միջազգային պայմաններին, ապա զրանք կդոյշանան ու կաճեն՝ կապիտալիստական յերկիրներում հեղափոխական ճգնաժամերի ու բանվոր դասակարգի հեղափոխական պոռթիկումների աճմանը զուգընթաց: Զի կարելի բանն այնպիս պատկերացնել, վոր մի յերկրի կամ մի քանի յերկիրների բանվոր դասակարգը կընթանա զեափ սոցիալիզմ և մանավանդ զեափի կոմունիզմ, իսկ մյոււ յերկիրների կառմիացիալիստներն անտարերեր կնայեն դրան ու ձեռքները ծալած կնատեն: Առավել ևս չի կարելի պատկերացնել վոր բանվոր դասակարգը կապիտալիստական յերկիրներում կհամաձայնի լինել այս կամ այն յերկրում սոցիալիզմի հաղթական զարգացման սոսկ դիտողը: Իրոք կապիտալիստները կանեն իրենցից կախված ամեն բան, վորածողի խեղուն այլովից յերկիրներին: Իրոք յուրաքանչյուր լուրջ քայլին զեափի սոցիալիզմը և մանավանդ զեափի կոմունիզմն այս կամ այն յերկրում անխուսափելիորեն ուղեկցելու յև կապիտալիստական յերկիրների բանվոր դասակարգի անզուսպ խոյանքը՝ դիկտատուրա ու սոցիալիզմ նվաճելու այդ յերկիրներում: Այսպիսով միջազգային հեղափոխության հետազարդացման ընթացքում կկաղմավորի համաշխարհային մասշտաբի յերկու կենտրոն. սոցիալիստական կենտրոն, վորը զեափի ինքն և ձգում սոցիալիզմին ձգող յերկիրները, և կապիտալիստական կենտրոն, վորը զեափի ինքն և ձգում սոցիալիզմին ձգող յերկիրները: Այդ յերկու կենտրոնի կոփիլը համաշ-

Խսարհային տնտեսությանը տիրանալու համար՝ վճռելու յե կառ  
պիտալիդմի և կոմունիզմի բախտն ամբողջ աշխարհում: Վորով-  
հետեւ համաշխարհային կապիտալիզմի վերջնական պարտությունը  
սոցիալիզմի հաղթությունն և համաշխարհային տնտեսության  
տակարեգում:

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՀԱՐՑԵՐԸ ՅԵՎ  
ՊԱՏՎԼԻՐԱԿՆԵՐԻ ՊԱՏԱՄԱՆՆԵՐԸ

**Ստալին:** Յեթե պատվիրակությունը շատ չի հոգնել, ապա յես թույլտվություն կիմնդրեցի իմ հերթին նրան միքանի հարց տալու: (Պատվիրակությունը հայտնում է իր համաձայնուրյունը):

1-ին Հ.Բ.Բ: Ինչո՞վ ե բացատրված բանիուների արհեստակցական կազմակերպվածության վոյք տոկոսն Ամերիկայում: Կարծեմ այնուղ 17 միլիոն ինդուստրիալ բանվոր կա: (Պատվիրակները տեղեկանել են տալիս, վոր 18-ից մինչև 19 միլիոն ինդուստրիալ բանվոր կա): Կազմակերպված ե կարծեմ մոտ 3 միլիոն: (Պատվիրակները տեղեկանել են տալիս, վոր Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայում հաօպիւմ ե մոտավորապես 3 միլիոն կազմակերպված բանվոր և, բացի գրանից, այլ միուրյուններում կա կես միլիոն կազմակերպված բանվոր, այդպիսով բնդամենք կա  $3\frac{1}{2}$  միլիոն կազմակերպված բանվոր): Յես անձամբ գտնում եմ, վոր սա արհմիություններում կազմակերպված բանվորների շատ փոքր տուկոս ե: Մեզանում, ԽՀՀՄ-ում արհմիություններում կազմակերպված և յերկրի բոլոր պրոլետարների 90 տոկոսը: Յես ուզում եյի ճարցնել պատվիրակությունից, արդյոք նա դրական փաստ և ճամարում բանվորների այս համեմատաբար քիչ կազմակերպված մինելն արհմիություններում: Պատվիրակությունը չի կարծում ուշադիր, վոր այս փաստը խոսում ե ամերիկյան պրոլետարիատի բռնական պայքարելու նրա գործիքների բաւորդյան մասին:

Բրոֆի: Արհեստակցական միությունների փոքրաթիվ լինելը ճարկավոր ե բացատրել վնչ թի արհեստակցական կազմակերպություններում գոյություն ունեցող անհաջող տակտիկայով, ոյլ յերկրի ընդհանուր տնտեսական պայմաններով, վորոնք բանվորների ամրող մասսային չեն դրդում դեպի կազմակերպություն

և, տնտեսական այդ պայմանների բարեհապատության շնորհիվ, նեղացնում են կապիտալիստների դեմ բանվոր զասակարգի պայմանը անհրաժեշտությունը: Այդ պայմաններն, իհարկե, փոխվելու յեն և այդ պայմանների փոխվելուն զուգահեռ՝ արհմիւթյուններն աճելու յեն, և ամբողջ արհշարժումն այլ ուղիով կընթանա:

Դուզլաս: Համաձայն եմ այն բացատրությանը, վոր տվեց նախորդ հոկտոբերը: Դրան կավելացնեմ, վոր, նախ, հարկավոր և նկատի ունենալ այն մոռհնութ, վոր վերջին ժամանակներս Միացյալ Նահանգներում իրենք կապիտալիստները խիստ շատ են բարձրացնում աշխատավարձը: Աշխատավարձի բարձրացման այս պրոցեսը նկատվում եր 1917 թվականին, 1919 թվականին և ավելի ուշ: Յեթե համեմատենք ներկայումս գոյություն ունեցող ռեալ աշխատավարձն այն աշխատավարձի հետ, վոր գոյություն ուներ 1911 թվականին, ապա զուրս կդա, վոր նա նշանակալիութեն ավելի բարձր ե: Արհշարժումն իր զարգացման պրոցեսում սկզբում կառուցվում եր և այժմ ել կառուցվում ե լատ ցեսային հատկանիշի, ըստ պրոֆեսիայի հատկանիշի, և արհմիւթյուններն ստեղծվել են առավելաբար վորակյալ բանվորների համար: Այդ միւռթյուններին զրուխ են կանգնել վորոշ առաջնորդներ, վորոնք վակ կազմակերպություն են ներկայացրել ու ձգտել են լավ պայմաններ ձեռք բերելու իրենց անդամների համար: Արհեստակցական միւռթյունների շրջանակներն ընդլայնելու և անորակ բանվորներին արհմիւթյուններում կազմակերպիլու համար դրդապատճառներ նրանք չեն ունեցել: Բայց իրանից ամերիկյան արհշարժումն ստիպված ե հաշվի առնել շատ լավ կազմակերպված կապիտալիզմը, վորն իր տրամադրության տակ ունի բոլոր միջոցները, վորպեսզի հակառակ արհեստակցական միւռթյուններում բոլոր բանվորների կազմակերպվելուն Յեթե, ասենք, տրեստացված արտադրությունն իր ձեռնարկություններից միենալումնելում հանդիպում և արհմիւթյան չափագանց ուժեղ դիմադրության, նա դիմում ե մինչև իսկ այնպիսի միջոցի, ինչ պիսին այդ ձեռնարկությունը՝ փակելը և աշխատանքն իր մի այլ ձեռնարկությունը փոխադրելն ե: Այսպիսով ջախջախվում և արհեստակցական միւռթյան դիմադրությունը: Ամերիկյան կապիտալիզմն ինքնուրբույնաբար բարձրացնում և բանվորների աշխատավարձը, բայց ընդունին վոչ մի տնտեսական իշխանություն չի տալիս, նրանց կյանքի տնտեսական բարելավման հա-

մար սղայքարելու հնարավորություն չի տալիս: Հետեյալ շատ  
կարեոր հանդամանքն Ամերիկայում այն ե, վոր կապիտալիստա-  
ները տարբեր ազգությունների պատկանող բանվորների միջի  
դժուռթյուն են սերմանում: Միծ մասամբ անորակի բանվորները  
Յելլուպայից յեկած բանվորներն են կամ, վերջին ժամանակներս,  
նեզք բանվորները: Կապիտալիստներն աշխատում են դժուռթյուն  
սերմանել զանազան ազգությունների պատկանող բանվորների  
միջև: Ըստ ազգությունների կատարվող այդ բաժանումը տեղի յի  
ունենում նաև վորակյալ ու անորակ աշխատանքի հատկանիշով:  
Կապիտալիստները սիստեմատիկաբար հակամարտություն են սեր-  
մանում տարբեր ազգությունների պատկանող բանվորների միջև,  
անկախ նրանց աշխատանքի վորակավորությունից: Վերջին 10  
տարում ամերիկյան կապիտալիզմն ավելի լուսավորված քաղաքա-  
կան, այսպես կոչված կոմպանիյական միություններն և ստեղ-  
ծում: Նա բանվորներին գրավում և գեպի իր ձեռնարկության  
աշխատանքը, բանվորներին շահագրգռում և այդ ձեռնարկության  
շահույթներով և այլն: Ամերիկյան կապիտալիզմը հակում ունի  
հորիզոնական բաժանումը փոխարինելու ուղղաձիգ բաժանումով,  
այսինքն՝ պառակտելու բանվոր դասակարգը, գրավելով նրան ու  
շահագրգռելով հոգութ կապիտալիզմի:

Կօլլ: Յես հարցին մոանում եմ վնչ թերթայի տեսա-  
կետից, այլ ոլրակտիկայի տեսակետից: Ճիշտ ե, ամենից լավին  
այն ե, վոր բանվորներին կազմակերպեն լավ ժամանակներում,  
բայց բանն այն ե, վոր Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի  
անդամների շարժման վիճակգրությունը ցույց ե տալիս, վոր  
Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիան աստիճանաբար կորցնում  
է անորակ բանվորներին ու իր կազմի մեջ ամերացնում և վորակյալ  
բանվորների քանակը: Այսպիսով՝ Աշխատանքի Ամերիկյան ֆեդե-  
րացիան ցանկանում ե լինել և աստիճանաբար դառնում ե մի  
կազմակերպություն, վորն իր կազմի մեջ ունի գլխավորապես  
վորակյալ բանվորներ: Արհեստակցական շարժումն Ամերիկայում  
անորակ բանվորներին գրեթե չի ընդդրկում: Արդյունաբերության  
խոշոր ճյուղերն արհմիությունների կողմից չեն ընդդրկվում:  
Արդյունաբերության այդ խոշոր ճյուղերից միայն ածխի ու յեր-  
կաթուղային արդյունաբերության բանվորներն են վորոշ չափով  
կազմակերպված, և այն ել ածխարդյունաբերության մեջ աշխա-  
տում են 65 տոկ. չկազմակերպված բանվորներ: Արդյունաբերու-

թյան այնպիսի ճյուղերի բանվորները, ինչպիսիքն են պողպատաձուլականը, կառուչուկինը, ավտոմոբիլայինը, արհեստակցականըներն զբեթե բոլորովին կազմակերպված չեն: Կարելի յև ասել, վոր անորակ բանվորներին արհմիությունները չեն ընդգրկում: Աշխատանքի Ամերիկյան ֆեդերացիայից դուրս կանգնած միշարք արհեստակցական կազմակերպություններ կան, վորոնք աշխատում են կազմակերպել անորակ ու սակավորակ բանվորներին: Ինչ վերաբերում ե աշխատանքի Ամերիկյան ֆեդերացիայի առաջնորդների գիրքին, առաջնորդներից մեկը, որինակ, մետաղագործների արհմիության նախագահը, միանգամայն բացահայտ կերպով հայտարարել ե, վոր ինքը չի ցանկանում անորակ բանվորներ գրավել իր միության մեջ: Արհմիությունների առաջնորդների նկատմամբ գրությունն այնպիս ե, վոր ստեղծվել ե առաջնորդների մի կաստա, վորը բազկացած ե միքանի տասնյակ այնպիսի մարդկանցից, վորոնք ստանում են հսկայական դրույքներ—տարեկան մինչև 10 հազար դոլլար և ավելի, ստեղծվել ե մի կաստա, ուր ներս ընկնելը չափազանց գժվար ե:

Դունին: Այն հարցը, վոր գրեց ընկ, Ստալինը, անարդարացի յի գրված, վորովհետեւ, յեթե նրա յերկրում արհմիություններում կազմակերպված ե բանվորների 90 տոկ., ապա այստեղ իշխանությունը բանվոր դասակարգին ե պատկանում, մինչդեռ կապիտալիստական յերկիրներում բանվորները ճնշված դասակարգ են, և բուրժուազիան ձեռք ե առնում բոլոր միջոցները, վորպեսզի բանվորներին հնարավորություն չտա արհմիությունների մեջ կազմակերպվելու: Բացի գրանից, այնտեղ գոյություն ունեն հետազիմական արհմիություններ, վորոնց գլուխ են կանգնած հետազնեմ առաջնորդներ: Այն պայմաններում, վոր կան Ամերիկյառում, արհեստակցական միությունների գաղափարն իսկ շատ դժվար ե արմատավորել բանվորների զլխում: Սա յե այն հանգամանքի պատճառը, վոր Ամերիկայում այնքան քիչ են տարածված արհմիությունները:

Ստալին: Վերջին հուետորն արդյոք համաձայն ե նախորդ հուետորների հետ, վոր Ամերիկայի բանվորական շարժման լիդերներից վորանք իրենք են աշխատում նեղացնել արհեստական շարժումը:

Դունին: Համաձայն եմ:

Ստալին: Յես չեյի ցանկանում վարեե մեկին վերավորել: Յես միայն ցանկանում եյի պարզել ինձ համար գործերի զրության

տարբերությունն Ամերիկայում և ԽՍՀՄ-ում: Յեթէ յես վորևէ մեկին վիրապորեցի, ներողություն և՛մ խնդրում: (Պատվիրակների ծիծառ):

Դունեն: Յես բնավ նեղացած չեմ:

Ստալին: Կա արդյոք Ամերիկայում բանվորների պետական ապահովագրության սիստեմ:

Պատվիրակներից մեկը: Բանվորների պետական ապահովագրության սիստեմ Ամերիկայում չկա:

Կոյլ: Նահանգների մեծամասնության մեջ գոյություն ունի փոխառառյում արտադրության մեջ պատահած գժբախտ գեղաքերի համար, ըստվորում վարձարարվում և աշխատունակության կորստյան մաքսիմում 30 տոկոսը: Այդ բանը գոյություն ունի նահանգների մեծամասնության մեջ: Վարձարարությունը տալիս են մասնավոր ֆիրմաները, վորոնց ձեռնարկություններում կորավել և աշխատունակությունը, բայց որենքն այդպիսի վարձարություն պահանջում են:

Ստալին: Ամերիկայում կա պետական ապահովագրություն գործադրկությունից:

Պատվիրակներից մեկը: Վաչ: Այն ֆոնդը, վոր ստեղծվում և գործադրկությունից ապահովագրելու համար, կարող և բավարարել 80-ից մինչև 100 հազար դորձադրլիքի բոլոր նահանգներում:

Կոյլ: Կա ապահովագրում (վոչ պետական) ինդուստրիալ գժբախտ գեղաքերից, այսինքն՝ արտադրության մեջ պատահած գժբախտ գեղաքերից: Բայց հիմնագության հետևանքով կամ ծերության հետևանքով առաջացած հաշմանդամությունը բնավ չի ապահովագրվում: Ապահովագրական ֆոնդը կազմվում և բանվորների մուծումներից: Ըստ եյության դորձը հանդում և այն բանին, վոր ապահովագրական ֆոնդի այդ ամբողջ գումարն իշխնք բանվորներն են վճարում, վորովհետև յեթե բանվորներն այդ ֆոնդը չկաղմնենին, նրանք բարձրագույն հավելում կատանային, իսկ քանի վոր այդ ֆոնդը համաձայնեցված և լինում բանվորների ու ձեռնարկատերերի միջև, ուստի և բանվորներն ավելի պակաս հավելում են ստանում: Սա կազմում և ֆոնդի համարյա թե ամբողջ գումարը: Ձեռնարկատերերը փաստորեն մուծում են այդ ֆոնդի չնչին մասը, մոտավորապես 10 տոկոսը:

Ստալին: Յես կարծում եմ, վոր ընկերների համար հետաքրքրական կլինի, յեթե յես հաղորդեմ, վոր մեղանում ԽՍՀՄ-

ում բանվորներին պետության հաշվին ապահովագրելու վրա տարեկան 800 միլիոն ռուբլուց ավելի յէ ծախսվում: Նույնողեւ ավելորդ չեր լինի հաղորդել ձեզ, վոր մեղանում բանվորներն արդյունաբերության բոլոր ճյուղերում, բացի սովորական դրամական աշխատավարձից, լրացուցիչ կերպով ստանում են մոտավորապես աշխատավարձի մեկ յերրորդը ապահովագրության, կենցաղիք բարելավման, կուլտուրական կարիքների համար և այլն:

2-րդ ՀԱՐՅ: Ի՞նչո՞վ բացատրել մասսայական բանվորական հատուկ կուսակցության բացահայությունը Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Բուրժուազիան Ամերիկայում ունի ամբողջ յերկու կուսակցություն — հանրապետական և դեմոկրատական, ամերիկյան բանվորները չունեն իրենց մասսայական կուսակցությունը: Ընկերները չեն դանում արդյոք, վոր իր մասսայական բանվորական կուսակցության բացակայությունը, թեկող այնպիսի կուսակցության, ինչպիսին Անգլիայումն ե (Անգլիա Պարտի), թուլացնում և բանվոր դասակարգի ուժը կապիտալիստների գեն մղած նրա քաղաքական պայքարում: Այնունահան, ինչո՞ւ բանվորական շարժման լիդերներն Ամերիկայում, Գրինը և ուրիշները, Ամերիկայում բանվորական կուսակցություն սեղծելուն վնասական պես դեմ են արտահայտվում:

Բրաֆիլ: Այս, յեղել և լիդերների այդպիսի վճիռ, վոր այդպիսի կուսակցություն ստեղծելու անհրաժեշտություն չկա: Ստակայն կա փոքրամասնություն, վորը դանում ե, վոր այդպիսի կուսակցության ստեղծումն անհրաժեշտ ե: Այժմ Ամերիկայում որքիեկտիվ պայմաններն այնպիս են, վոր, ինչպիս արդեն մատնանշվեց, արհշարժումը Միացյալ Նահանգներում շատ և թույլ իսկ արհշարժման թուլությունն ել, իր հերթին, բայցարդվում ե նրանով, վոր բանվոր դասակարգն առայժմ կազմակերպվելու և կապիտալիստների դեմ պայքարելու կարիք չունի այն բանի շնորհիվ, վոր կապիտալիստներն իրենք են բարձրացնում բանվորների աշխատավարձը, բավարար նյութական դրություն են ազատավում նրանց համար:

Ստալին: Զե՞ վոր գլխավորապես վորակյալ բանվորներն են ապահովվում: Այսուեղ հակասություն կա: Մի կողմից, գուըս և գալիս, վոր կազմակերպվածության անհրաժեշտություն չկա, քանի վոր բանվորներն ապահովված են. մյուս կողմից, ասում են, թե արհմիություններում կազմակերպված են հենց ամենից ավելի ապահովված, այսինքն՝ վորակյալ բանվորները. յերրորդ կողմից,

զուքս և գալիս, վոր արհմիություններում կաղմակերպված չեն հենց ամենից քիչ ապահովվածները, այսինքն՝ սակավորակները, վորոնք ամենից ավելի յեն կարիք զորմ կաղմակերպվածության: Յես վոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ այդ:

Բրոֆիլ: Այս, այստեղ հակասությունն կա, բայց նույն կերպ հակասական և ամերիկյան իրականությունը քաղաքական ու տնտեսական տեսակետներից:

Բրեթներ: Թեև անորոշ բանվորները միություններում կաղմակերպված չեն, բայց նրանք ձայնի քաղաքական իրավունք ունեն: Այսպիսով, յեթե կան դժգոհության մոմենտներ, ապա անորոշ բանվորներն այդ մոմենտներն արտահայտում են՝ ոգուվելով ձայնի իրենց քաղաքական իրավունքից: Մյուս կողմից, արհմիություններում գտնվող բանվորները, յեթե նրանք առանձնապես ծանր ժամանակ են ապրում, ոգուվում են վիչ թե միությունից, այլ ձայնի քաղաքական իրավունքից: Այսպիսով՝ ձայնի քաղաքական իրավունքով փոխհատուցվում և արհեստակցական կաղմակերպվածության բացակայությունը:

Իգրալս: Հիմնական դժգարություններից մեկն ել ինքը սիստեմն և, Միայցալ նահանգների ընտրական սիստեմը: Այնտեղ հանրապետության նախագահի ընտրությունների ժամանակ այն մարզը չի ընտրվում, ով ստանում և ամրող յերկրի ձայների մեծամասնությունը կամ նույնիսկ վորեւ մի դասակարգի ձայների մեծամասնությունը: Այնտեղ յուրաքանչյուր նահանգում կան ընտրական կողմիաներ, յուրաքանչյուր նահանգում ունի վորոշ քանակով ձայներ, վորոնք մասնակցում են նախագահի ընտրությանը: Վորպեսզի նախագահն ընտրված լինի, անհրաժեշտ և, վոր նա հավաքի ձայների  $51\%$ -ը: Յեթե 3—4 կուսակցություն լինի, այն ժամանակ իրերի այնպիսի դրություն կտացվի, վոր վոք չի ընտրվի, և ընտրությունները պետք են կոնգրես փոխազդրին: Ահա սա յե փաստարկ հանդիսանում յերրորդ կուսակցության ստեղծման դեմ: Յերրորդ կուսակցություն ստեղծելու հակառակորդներն այսպես են փաստարկում. յերրորդ թեկնածու մի առաջադրեք, վորովհետև այդպիսով դուք կարո՞նեք լիբերալ կուսակցության ձայների թիվը և լիբերալ կուսակցության թեկնածուին ընտրելու հարավորություն չիք տա:

Ստալին: Սակայն սենատոր և առաջադրությունն առաջարկում է իր ժամանակին յերրորդ բուրգուական կուսակցություն: Բանից գուրս և գալիս, վոր յերրորդ կուսակցությունը չի կարող ձայները արտհել,

յեթե բուրժուական կուսակցություն և նա, բայց կարող և ձայները տրոհել յեթե նա բանվորական կուսակցություն լինի:

Դեմքս: Յես չեմ դանում, վոր նախորդ հոկտորի մատնաշնած փաստը հիմնական փաստ և: Հստիս, հիմնական փաստը հետեւյալն ե: Վորպես որինակ յես տալիս եմ իմ քաղաքը, վորտեղի յիս ապրում եմ: Ընտրությունների կամպանիայի ժամանակ դալիս և այսօնչ կուսակցության ներկայացուցիչը և արհեստակեցական կազմակերպության գլխավորին մի վորեն պատասխանառու պաշտոն և տալիս, արհեստական կազմակերպության գլխավորին, ընտրական կամպանիայի կապակցությամբ, վորոշ միջոցներ և հանձնում, վորոնք նրա ողտին են գնում, դրանից հետո նա վորոշ պլրստիթ և ստանում այն պաշտոնի կապակցությամբ, վոր նա ստանում ե: Ստացվում է իրերի այնպիսի դրություն, վոր արհմիութենական շարժման լիդերներն իրենք կամ այս կամ այն բուրժուական կուսակցության կողմնակիցներ են հանդիսանում: Ուստի բնական ե, վոր յեթք յերբորդ, բանվորական կուսակցություն ստեղծելու վերաբերյալ խոսակցություններ են ծագում, արհմիութենական շարժման այս լիդերներն այդպիսի կուսակցություն ստեղծելու համար վոչնչի չեն ուզում ձեռնարկել: Ընդումին նրանք մատնանշում են այն հանդամանքը, վոր յեթե յերբորդ կուսակցություն ստեղծվի, ապա արհմիություններում պառակտում կստացվի:

Դեմքս: Այն, վոր արհմիություններում միայն վորակյալ բանվորներն են կազմակերպված, զլիսավորապես նրանով և բացարկվում, վոր արհմիության մեջ կազմակերպված լինելու համար պետք և ունենալ վորոշ քոնդ ու վորոշ ապահովություն, վորովհետև անդամավճարները շատ մեծ են, և անորակ բանվորները մուտքի բարձր վճար մուծելու հնարավորություն չունեն: Բայց դրանից, անորակ բանվորները զանվում են մշտական սպառնալիքի տակ, վոր յեթե իրենք վորձեն կազմակերպվիլ ապա ձեռնարկատերն իրենց դուրս կշպրտի աշխատանքից: Անորակ բանվորները կարող են կազմակերպվել վորակյալ բանվորների գործոն աջակցությամբ միայն: Այսպիսի աջակցություն նրանք մեծ մասամբ չեն ունենում: Ահա այս հանդամանքն անուրակ բանվորներ՝ արհմիություններում կազմակերպվելու հիմնական խոչընդուներից մեկն ե: Բանվորական մասամաների կողմից իրենց իրավունքների հիմնական պաշտպանությունն ընթանում և այդ իրավունքների քաղաքական պաշտպանության

գծով: Յես հենց սրա վրա յեմ հիմնում անորակ բանվորների կաղմակերպության բացակայության զվարավոր պատճառը: Քաղաքական ու արհմիութենական բնագավառներում անորակ բանվորների կաղմակերպված չլինելու հիմնական մոմենտը յես տնտեսական բարդան եմ համարում: Յես պետք ե մատնանշեմ ամերիկյան ընտրական սիստեմի մի առանձնահատկությունը, ուղղակի ընտրությունները, վորտեղ ամեն մի մարդ կարող ե ընտրական ժողով դալ ու իրեն հայտարարել գեմոկրատ կամ հանրապետական ու քվեարկել: Յես հավատացած եմ, վոր Գոմպերսը չեր կարողանաբանվորներին պահել վոչքաղաքական ծրագրով, յիթե նա չունենար ուղղակի ձայնտվության ոգտին այս փաստարկը: Նա միշտ ասում եր բանվորներին, վոր յիթե նրանք ցանկանում են քաղաքականապես գործել ապա նրանք կարող են մտնել գոյություն ունեցող յերկու քաղաքական կուսակցությունների մեջ և այնտեղ գրավել այս կամ այն պաշտոնը, այնտեղ իրենց համար հեղինակություն նվաճել: Այս փաստարկի ոգնությամբ Գոմպերսին հաջողվում եր բանվորներին հետ պահել բանվոր դաստիարակը կաղմակերպելու և բանվորական կուսակցություն ստեղծելու գաղափարից:

Յ-րդ ՀԱՐՑ: Ինչո՞վ բացատրել, վոր ԽՍՀՄ-ի նախաչման նարգում Աշխատանիք Ամերիկյան Ֆեդերացիայի լիգերներն ավելի հետադիմ են, քան բուժօւաներից շատերը: Ինչո՞վ պետք ե բացատրել, վոր այնպիսի բուժօւաներ, ինչպես են պ. Բորահը և ուրիշները, արտահայտվում են հոգուտ ԽՍՀՄ-ի ձանաչման, իսկ Ամերիկայի բանվորական շարժման լիգերները, Գոմպերսից սկսած մինչև Գրինը, մղում ելին և շարունակում են մղել ամենահետադիմական պրոպագանդան բանվորական առաջին հանրապետության ձանաչման դեմ: Ինչո՞վ բացատրել, վոր նույնիսկ մի այնպիսի հետագեմը, ինչպես ամերիկյան նախիննախապահ Վուդրո Վիլսոնն եր, հնարավոր եր գտնում «վողջունելու» Խորհրդային Ռուսաստանին, իսկ Գրինն ու Աշխատանիքի Ամերիկյան Ֆեդերացիայի այլ լիգերները ցանկանում են ազիլի հետադիմ լինել քան կապիտալիստներն են: Ահա Վուդրո Վիլսոնի «վողջունից» տեքստը, վոր 1918 թվի մարտին ուղարկվել եր Ռուսաստանի խորհուրդների համագումարի անունով, յերբ գերմանական կայզերի զորքերն արշավում ելին խորհրդային լինին գրադի վրա.

«Բնդպավելով Խորհուրդների համագումարից՝ յես կուզեյի Միացյալ Նահանգների ժողովուրդների կողմից անկեղծ համականք արտահայտել ուսւ ժողովրդին, մանավանդ այժմ, յերբ Գերմանիան զինված ուժեր և շարժել յերկը ներսը, վրավեսպի խանգարի աղասության համար մզկող կավիճ, վոչ չընչացնի յերկը բոլոր նվաճումները և իրականացնի զերմանական զինավորություններն ու ուսւ ժողովրդի անվատական վարչությունը. Թեև Միացյալ Նահանգների կառավարությունը ներկայումս, ցավոք սրտի, ի վիճակի չեն ցույց տալու թուաստանին այն անմիջական աջակցությունը, որը նա ցանկանում է ցույց տալ, յես կուզեյի ներկա համագումարի միջացով հափառացնել ուսւ ժողովրդին, զոր Միացյալ Նահանգների կառավարությունը կոգագարծի բոլոր հնարավորությունները, վրավեսպի Խուսաստանին նորից լիակատար ուռիշերենիտես և նրա ներքեւն գործերում լիակատար անկախություն ու այն մեծ գերի լիակատար վերականցնումն ապահովի, զոր նա ունի Յեվրոպայի ու ժամանակակից մարդկության լյանքում. Միացյալ Նահանգների ժողովուրդն ամբողջ սրտով համակրում և ուսւ ժողովրդին՝ ինքնակալությունից ընդմիշտ աղասիլելու և ինքն իր բախտի անորինողը զանալու նրա ձգուման մեջ» (տե՛ս «Արաւած Հ 50, 1918 թվի մարտի 16»):

Կարելի՞ յեւ արդյուն նօրմալ համարել, վոր Աջասամենի Ամերիկյան Ֆեդերացիայի լիդերները ցանկանում են ավելի հետադեմ լինել, բայ հետադեմ Վ. լիսոնը:

Բրոֆի: Յես չեմ կարող պատճառները ճշգրիտ կերպով բացարել, բայց յես գտնում եմ, զոր հենց այնպես, ինչպիս վոր Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիան Ամստերդամի Ինտերնացիոնալի մեջ մտնում, նույն այդ պատճառներով ել Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի լիդերները կանգնած են Խորհրդային Խուսաստանը ճանաչելու տեսակերպի վրա: Տարբերությունն ամերիկյան բանվարների հատուկ կիլիսովիայության մեջ և և ամերիկյան ու յեւրոպական բանվորների միջև դոյություն ունեցող տնտեսական տարբերության մեջ:

Սալլին: Բայց Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի լիդերները, վորքան ինձ հայտնի յես, չեն առարկում իտալիայի կամ Լեհաստանի ճանաչման գիմ, վորտեղ ֆաշիստներն են իշխում:

Բրոֆի: Իրբեւ որինակ մատնանշելով Լեհաստանն ու Իտալիան, վորտեղ ֆաշիստական կտակավարություններ կան, զուք զրանով ել բայցատրում եք Ամերիկայի կողմից ԽՍՀՄ-ն ճանաչելու պատճառը: Այդ անբարյացակամ վերաբերմունքը գեղի ԽՍՀՄ-ն բացատրվում և այն անախորժություններով, վոր ունին ամերիկյան արհշարժման լիդերներն իրենց սեփական կոմունիստների հետ:

Դունն: Այն պատճառը, վոր բերեց նախորդ հռետորը, — թե

նրանք ինչպես կարող են ճանաչել ԽՍՀՄ, յերբ նրանք անհամեռաշխատթյուն ունեն իրենց սեփական կոմունիստների հետ, — ճամողիչ չե, վորովհետև ԽՍՀՄ-ն ճանաչելու վերաբերյալ քարոզը նրանց մոտ մզկում եր գեռես մինչև ամերիկյան կոմկուսակցության կազմակերպումը: Հիմնական պատճառն այն է, վոր Աշխատանքը Ամերիկյան ֆեղերացիայի լիդերները դեմ են ամեն մի բանի, ինչ վոր նման ե սոցիալիզմի: Յեվ այս տեսակիտից նրանց լարում են կապիտալիստները, վորոնք ունեն «Աղջային քաղաքացիական ասոցիացիա» կոչվող մի կազմակերպություն, վորն աշխատում ե բոլոր միջոցներով ամբողջ ամերիկյան հասարակությունը լարել սոցիալիզմի դեմ՝ ինչ ձեռվ ուզում ե այն լինի: Այդ կազմակերպությունը հանդես յեկավ Այլի կիր բոնած դիրքի դեմ, վ'յը հանդես եր յեկել հանուն Ամերիկայի առևտրական հարաբերությունների դարձացման ԽՍՀՄ-ի հետ: Այդ կազմակերպության առաջնորդներն ասում ենին. ել ինչպես կարող ենք մենք հակել կարգ ու կանոնին մեր բանվոր դասակարգի մեջ, յերբ Ամրաներն են սկսում այդպիսի խոսակցություններ ունենալ: «Է դպային քաղաքացիական ասոցիացիան» մի խումբ կապիտալիստների կազմակերպությունն ե, վորոնք խոշոր գործարով փող են ներդրել այդ կազմակերպության մեջ և զեկայի արում են նրան: Հարկավոր ե նշել, վոր Աշխատանքը Ամերիկյան ֆեղերացիայի նախագահի տեղակալ Մատյոս Վոլն այս հետադիմական ասոցիացիայի մեջ փոխանակագահ ե:

Բառիք: Արհմիութենական առաջնորդների հետադիմականության վերաբերմամբ բերվող պատճառները հիմնական պատճառներ չեն. այս հարցի վրա ավելի խորը պետք ե նայել: Ամերիկյան պատճերակության ներկայությունը ԽՍՀՄ-ում՝ դեպի Խորհրդային Միությունը ամերիկյան բանվորների մի մասի տածած համակրական վերաբերմանքի լավագույն պատասխանն ու ցուցանիշը: Եթե գտնում եմ, վոր Աշխատանքը Ամերիկյան ֆերացիայի առաջնորդների կարծիքը ԽՍՀՄ-ի նկատմամբ չի տարբերվում Ամերիկայի բանվոր դասակարգի մեծամասնության կարծիքից: Բանվոր դասակարգի մեծամասնության դիրքը ԽՍՀՄ-ի նկատմամբ բացարձիւմ ե ԽՍՀՄ-ի հեռավորությամբ: Ամերիկայի բանվոր դասակարգն ամեն տեսակի միջազգային գործերով շահագրգութած չե, իսկ բութուազիայի ազգեցությունն Ամերիկայի բանվոր դասակարգի վրա ուժեղ կերպով արտահայտվում ե ԽՍՀՄ-ի նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքի հարցում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Պատվիրտության հարցերը և ընկ. Ստալինի պատասխանները . . . . .	Եզ 5
II. Ընկեր Ստալինի հարցերը և պատվիրակների պատասխանները . . . . .	43



Որոշ. 1949 թ.

Թարգմ. Ա. Խոնդկարյան  
Խմբ. Ա. Կիրակոսյան  
Տեխն. խմբ. Ա. Խոչատրյան  
Պատ. ուղագրիչ Լ. Արալյան

---

Գլավվիտի լիազոր Ի—4893, հըտա. № 463  
Պատվեր № 118, տիրաժ 10.000  
Հանձնված և արտադրության 3/VII 1937 թ.  
Ստորագրված և սպառցության 1/IX 1937 թ.  
Գինը 50 կ.

Հայկական ըստա, ապարան, Յերևան, Ալահվերդյան 71

3807

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0021341

-054нр.  
9112 534

473

ЦЕНА

A 11  
6812

И. СТАЛИН

БЕСЕДА С ПЕРВОЙ  
АМЕРИКАНСКОЙ РАБОЧЕЙ  
ДЕЛЕГАЦИЕЙ

Армпартиздат, Ереван, 1937

Проп